

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԽՏԱԻՈՐ ՄՍՐՄԱՋՆԻՍ

Նոր կեանքի նախորդ թիւին «Սխալ մը, ոճիր մը» վերնագրով յօդուածին մէջ կ'ըսէինք. «Մինչև հիմակ մեր ազէւցներուն մեծագոյն պատճառն եղած են մեր շատախօսութիւնը, ցուցամոլութիւնը, պոռոտախօսութիւնը, եղածը ու չեղածը տանիքներու վրայ պոռալ կանչելու ատուար մարմալը, ու զեռ մեզի խրատ չեղաւ ասիկա. չորս տարի է որ ատոր զէմ կը մաքաւինք:» — Ու դեռ պիտի մաքաւինք:

Բայց որո՞ւ զէմ: Շատախօսներուն, ցուցամոլներուն, պոռոտախօսներուն. ա՛յ, այլ ուղղակի ազգին հոգեկան հիւանդութեանը զէմ: Ամէն անոնք որ անհատական կամ կուսակցական շահերու ապահովութիւնը ինքնագով ցուցամոլութեան մէջ կը փնտռեն, անոնք իրենց ցեղին հոգեբանութիւնը ուսումնասիրած են. հաճոյակատարութեան գաղտնիքը գիտեն: «Ժողովուրդս այս նշան խնդրէ» ըսուած է. հայ ազգին համար ալ կրնանք ըսել «ժողովուրդս այս ցուցամոլութիւն խնդրէ»: Առանց հրաշագործութեան ոչ սք գերաբուն արարած կը համարուի. առանց ցուցամոլութեան՝ ոչ մէկ հայ մեծ հայրենասէր կը հոչակուի:

Երբեք երբեք ուշադիր եղէք թէ «Մեծ-Հայրենաւերները» ինչ տեսակ զէնք կը քրքածեն շատ չիւսողներուն դէմ: Պոզոտախօսները՝ որպէս զի անձայն, անշշուկ գործողները ազգին առջև վարկաբեկ ընեն, անոնց գաղտնապահութիւնը կը նշաւակեն իբր ողորմելի տկարութեան ապացոյց:

— Պարոններ, կը գոչեն, զուք Բարիզ, Պերլին, Լոնտոն ինչ կ'ընէք: Օր մը օրանց մեզի պէս Մուլպէրիին հետ քիթ քիթի նստած խորհրդակցած էք թէ Անգլիա հայկական խնդրին մէջ ինչ քաղաքականութեան պէտք է հետեւի: Մաքերնուզ անցուցիք, ինչպէս մենք ըրինք իսկ, Տիլքասէին հրաման տալ որ օուլթանը ահաբեկելու համար, Ֆրանսական մարտանաւերը Մերսինի ջուրերը զրկէ: Արդեօք երբեք համարձակեցա՞ք, ինչպէս մենք այդ քաղաքները ունեցանք, Պիւլովին

երկու բառ կրել եւ ըսել որ՝ «սա վիշկելմին սանձը գունքի մը կը քաշե՞ս, չէ՞նէ մենք քաշելու կերպը գիտենք:» Մակաբոյժներ: Մենք ո՛ւր, գուր ո՛ւր:

Ու շտարակուսինք որ մատի վրայ պիտի չհամրուին այն հայերը որ պիտի ըսեն,

— Անանկ է, անանկ է. իրաւունք ունին: Եթէ այդ մարդիկը քաղաքագէտներուն հետ բան մը խօսած ըլլալին, միթէ Հայաստանի հարսներուն պէս բերաննին կապ մը դրած, լուս մունջ պիտի նստէին: Իրենց ալ կանչէն վար ինչ որ ըսուեցաւ, զայն երգիքներուն վրայ պիտի չպոռային: Ուրեք քանի որ ձայներնին քաշած նստեր են, ըսել է թէ անդորժ աշխններ են: Մակաբոյժներ են:

Երբ խղճամիտ, լուս գործունէութիւնը կը դատապարտուի հայ ազգէն, ինչո՞ւ զարմանանք եթէ հայրենասիրութեան թմրկահարները մեր մէջ միշտ երևան գան: Երբ փոքր ինչ ուշադիր դիտենք վերջին ժամանակներս հայ ազգին մէջ կատարուած յեղափոխական կամ քաղաքագիտական աշխատութիւնները, կ'անգրագանանք թէ խորհրդապահութիւնը և համեստութիւնը միշտ ուղղակի համեմատութեան մէջ են ու եւ է ձեռնարկի լրջութեանը ու պահանջած անձնութեանը հետ: Շատախօսութիւնը, ստախօսութիւնը, խաբեկայութիւնը որոնք մեր դատին աղետները եղած են, ու պիտի ըլլան, ուրիշ շարժառիթ չունին բայց եթէ ժողովուրդը շրջանելու անխուսափելի հարկը: Մեղալնք մինակ շրջանողը չէ, այլ՝ շրջողն՝ ալ: Հին ատենները Երզնի մէջ պատահած դէպք մը կը հաստատէ այս ճշմարտութիւնը:

Այս առթիւ աւելորդ չենք համարիր հիշէն ու նորէն բանի մը զէպք յիշեցնել: Օր մը, հինգ վեց տարի առաջ, կարմիր թուղթերու վրայ ոմանք գոռացին հայաբնակ ինչ ինչ քաղաքներու մէջ յեղափոխական պայթումներու լուրերը: Ո՛չ ոք համարձակեցաւ ստախօսութիւն մը ենթադրել: Իրողութիւնը ստուգելու ոչ ժամանակ կար, ո՛չ միջոց: Եփքէն, բայց շատ եաքէն, իմացուեցաւ թէ ազգը շրջանելու պէտք մը զգացուած է եղեր, ուստի եւ ազգին շատ սուղի նստող խաբեկայութիւն մը առժամապէս օգտակար երևցած էր:

Մէկ երկու տարի առաջ Իզմիր հայ մը կը սպաննուի, առետրական համ ընտանեկան գործի մը պատճառով:

ուաւ. ու ահա արատաւհամարի թերթ մը պաշտօնական ծանուցումով մը կը յայտարարէ թէ «այս սպաննութիւնը իզմիրի կենտրոնական կօմիտէտը» չէ որ կատարած է: Իբր թէ՛ ինչպէս որ «առանց Առտուժոյ հրամանին տերև մը չ'ընար» ասանկ ալ առանց «կենտրոնական կօմիտէտի» հրամանին հայ մը չկրնար սպաննուիլ: Բայց ազգը շլացնել պէտք էր. հարուստ քաղքի մը մէջ քօմիթէ կայ: Իրաւ է սր եղածը չեղածը ուրիշ բան չէր բայց եթէ «պտղիք» համար երկու նուիրակի առժամայ այցելութիւն մը: Հոգ չէ՛, ժողովուրդը թո՛ղ զուր տեղը տառապի: Եթէ հայ մը երթար թիւրք իշխանութեան իմացնէր որ իզմիրը մէջ յեղափոխական քօմիթէ մը կայ, անշուշտ այդ հայը մատնիչ պիտի համարուէր:

Սրենոյն երևոյթը թղթակցութեանց համար ալ: Արտասահմանի ո եւ է թերթի մը մէջ Պոլսէն թղթակցութիւն մը ո եւ է վտանգ շնորկայացներ. Պոլիսը շատ լաւնաճաւ է. բայց ահա հայ աշխարհին մեծ կամ պզտիկ քաղաքներն, նոյն իսկ գեղերէն թուազրեալ թղթակցութիւններ միշտ կը հրատարակուին այնպիսի թերթերու մէջ որոնք յեղափոխական անունը կը կրեն: Գիտենք թէ այդ սամակները, մտնաւանգ վերջին ատեններս, ուրիշ բան չեն բայց եթէ արտասահման գտնուող Հայոց հասած անհատական նամակներէն ընդլայնուած քաղուածներ. և սակայն պէտք է Հայաստանի քաղաքներու, գեղերու անունները դնել, որպէս զի ժողովուրդը կտրօժէ թէ հոն Մասնածիւղ կայ: Իրաւ է որ թիւրք կառավարութիւնն ալ անանկ պիտի կարծէ, եւ ըստ այնմ պիտի գործէ. բայց ի՞նչ փոյթ: Այն վայրը ուր որ Մասնածիւղ կայ, կամ կուտակցական գործեր, ընդհանրապէս անտեղուանքներէ շատ դուրսին չհրատարակուիր, իսկ միւս քաղաքներն ու գեղերը թո՛ղ մատաղ ըլլան կուտակցական կամ անհատական նկատումներու:

Քաղաքական շրջանակներու մէջ ալ շատ աղէտքներ կը պարտիք ցուցամուտութեան ախտաւոր մարմալին, որ հայուն ուղեղը կը ջրացնէ:

Երկու տարրի մը շափ առաջ Ֆրանսա թիւրքիոյ համար նոր զեպական մը կը նշանակէր: Պ. Գինսթանը իր պաշտօնատեղին երթալէ առաջ կը յօժարի իրմէն ունկընդորութիւն խնդրող Հայոց խումբ մը ընդունիլ: Նախօրոյ զեպանը Պոլսէն ալլուր փոխադրուած էր հայկական ինդիլին մէջ սուլթանին շատ տհաճելի քաղաքականութեան հետեւած ըլլալուն համար. իր յաջորդը բնականաբար տարբեր ծրագրով պիտի երթար: Քիչ շատ նրբամտութիւն կրնար մեզի ենթադրել տալ թէ Պ. Գինսթանի անհնարին էր Բարիզէն իր հետը իբր յանձնարարական տանիլ հայաստանութեան վկայական մը: Հայ պատգամաւորութիւնը ընդունելու իր պատրաստականութիւնը պէտք էր կասկածներ յարուցաներ: Եւ մանաւանդ գծուար չէր մտածել թէ Ֆրանսայի զեպական մը իր քաղաքական հրահանգները ոչ թէ մենէ ալ իր արտաքի

գործերու նախարարէն կ'օտանայ, եւ զիմուր պէտք էր ուղղակի Պ. Տելքասի ընել: Բայց Պ. Գինսթան որ իր գործը գիտէ, առիթէն սքանչելապէս օգտուեցաւ, հայերը ի լուր աշխարհի տղտը մը լուալու համար. ինչ որ ամենամեծ պատեհութիւն մըն էր իրեն սուլթանին հաւատելու համար իր թրքաստրութիւնը: Եւ սակայն ազգովին շլացանք ու ծափեցինք պատգամաւորութիւնը:

Բրօ Արմէնիաի հիմնարկութիւնը, անոր շուրջը բոլորուած խումբը, մեր դատին փոխանակ օգտակար ծառայութիւն մը մատուցանելու, անտարակոյս շարիք պիտի պատճառէ եթէ Բրօ Արմէնիաի շուրջը կուտակցական ու անհատական շահերու մաքառումը պարբեցնելու մըջոց չգտնուի:

Պէտք էր գիտնալ թէ Բարիզ կէտ մը դրուած էր որ ժամանակին հետ մեծ կեդրոնի մը համեմատութիւնները կրնայ առնել: Ամէն հայ նմանելով մըլիւնին որ անձայն անշուշտ իր բոյնը կը տանի իր աւարը, թո՛ղ իր կրցած ծառայութիւնը այդ Ֆրանսական հաստատութեան մատուցանէր անխօսուկ: Բայց տեսանք թէ ոմանք իրենց արտակարգ իրարանցումովը, ուրիշներ՝ չկամէութեան ներշնչած թելադրանքներով սկսած աշխարհի ազգարարել թէ Բարիզի ֆրանսական թերթը պարզապէս հայկական ձեռնարկ մըն է: Այս զեկուցումը կրնայ չեզոքացնել Ֆրանսայի հայասէր հիմնարկութիւնը, բայց ո՛ր կանգ պիտի առնէ այս նկատողութեան առջեւ: Ժամանակ չկայ. հարկը օտիպողական է:

Ժողովուրդը խօսք մը ունի որ կ'ըսէ թէ «հացը հիմակ աւալանին բերանն է»: Այսինքն թէ՛ մարդ վատտակ մը ընելու համար շարաշար աշխատանք պէտք է կրէ: Հիմակ Եւրոպայի մէջ կարգ մը «հայրենասէրներ» կըրնան ըսել թէ «հացն ու փառքը աւալանին բերանն են». դ իրաւ ալ հիմակ հայ ազգը առջի միջոցներով շլացնել կարելի չէ: Դժբաղդութեանց անցեալ մը մեզի աչքբացութեան կը պարտաւորէ: Ի՞նչ պէտք է ընել. գործ ցոյց տալու է՝ Ո՛ր ապաքէն ազգին շարունակ քարոզեցին թէ միշտ հարկաւոր է շուտ, անմիջապէս գործել, առանց շնչառութեան ժամանակ ունենալու: Եւ ազգը տարիներէ ի վեր կը օպասէ թէ ի՞նչ պիտի գործեն: Ո՛ր բան մը ըրին, ո՛ր ալ բան մը կրնան ընել անսնք որ շլացուցման կը հետամտին: Ուստի հիմակ զիւանագիտութեան վրայ թառեր են: «Մենք թեյ ենք զիպլոմացիային վերայ» գոռացողները, այսօր զիւանագիտութեան շուրջը կը սրբատան: Առանց կը մրցակցին անհատներ ալ, որոնք իրենց կարևորութիւնը ապացուցանելու համար, ազգին բան մը ցոյց տալու են: Եւ ահա «առաջ անցնելու» խօսք պայքարը կը մղուի ասոնց միջեւ: Եւ յորմէ հետէ Բրօ Արմէնիաի մը երեւումը տեսնուեցաւ, մրցումը ալլ եւս խելակորոյս կ'ընէ «հայրենասէրները»:

Այդ մրցումին հետեւանքն է այն փոռատենջիկ սնանկարծութիւնը զոր «Սխալ մը, սօճի մը» վերնագրով

յօղուաճին մէջ դատաւարացիները: Բայց ինչո՞ւ այդ սխա-
լը, ինչո՞ւ այդ ոճիրը:

Բստիչ եռսեռ երգեցեալն երևան ելող Հանդէսի մը
խմբագիրը իր ոտած մէկ երկու Հանրօշուտ դիմումները
գաղտնի պահելու արժանիքն ունեցած էր: Այդ խոհա-
կանութիւնն այս էջերուն մէջ ալ դրուատուեցաւ: Բայց
ահա յանկատօ այդ երկուսն խոհեմ երեսասորը այ-
սօր անտարբար մտածելը մը մղուած, կ'ըլլէ իր նախաձեռ-
նութիւնն իր վերաբերեալ քաղաքական գործ մը, որուն
ծագումը խորհողատու գաղտնապահութեամբ շրջապատ-
ուած չեալով, պիտի կրնար սարսափազդեցիկ ներգործու-
թիւն մը ունեննալ: Թիւրքիոյ վրայ: Ինչ է այս յանկար-
ծաճին իմաստութեան շարժառիթը: Մրցումը, Հիմակ բո-
ւոր մեռ «Հայոցն ստերները» Բարիչի վրայ թափեր են:
Միտին Հոն կառնի է բան մը փորձել, և աղմուկ հանե-
լու դիտութիւն ունենալ: «Ես ըրի, գուն շրթի»-ը գորա-
ւոր դէնք մը կը համարուի առիւծին բերնէն փառքը կոր-
զելու համար: Ուստի պէտք է մեծագոյն փոխաբել ազ-
գային դատին մատուցուած էն պատիկ աշակցութիւնն
իսկ, որպէս զի հայ ժողովրդին ամբողջ ուշադրութիւնը
գրասեղ հնարարուր ըլլայ:

Էնիս փաշա մը Հալէպի կուսակալ կը նշանակուի:
Այդ մտորուն անցիւղը աշխարհի ծանօթ է. յատկապէս
Պրանսոյի արտաքին գործերու պաշտօնատան հրատա-
րակութիւններէն. աւարջը Եւրոպան այդ անուանումին
գէտ բողոքեց ապարդիւն կերպով: Բայց կ'ենթադրուի
թէ անոր իշխանութեան շրջանակին մէջ ո եւ է գէպք
պատահած պարագային Եւրոպա ազգու միջամտութիւն
մը ընելու հակառէ պիտի դանուէր: Եւ ահա այդ
կողմերը կոտորածի մը պատրաստութեան լուրը կը
պտտուի: Այս տեղեկութիւնը իմացող ս եւ է հայ պէտք
էր գալիս եւրոպացիներու հաղորդէր գաղտնապէս, եւ
պատահարին առջեւ առնել տալ: Մուլթանը գիտնա-
լու իսկ չէր թէ ինչպէս յանկարծ իրեն սպանալիքներ
կը դրոշմին, ու մարտանաւեր Մերսինի էւրեքը կ'եր-
թան: Բայց ահա աղմուկ մըն է որ կը բրգի. հայերէն
թերթ մը կը սկսի պոռալ կանչել թէ այդ լուրը ինքն է
աշխարհի հոչակագր: — Միկնոյն ատեն ուրիշ մըն ալ հե-
ի հեւ կը մագէ պոռալու թէ Պրանսոյի արտաքին գոր-
ծերու պաշտօնատունը իր հրամաններուն ներքէ է: Հա-
ւանական է որ Պրանսոյի թէ արտաքին գործերու պաշ-
տօնատունը, թէ՛ քաղաքական անձնաւորութիւնները զըզ-
ուանք զգան Հայոցմէն:

Հիմա քանի մը տարի ետ դառնանք, և այսպիսի ու-
րիշ գէպքի մը յիշատակութիւնը ընենք: Գործը մոռցուած
անցեալի մը վերաբերելով կրնանք վեր ի վերոյ զայն
յիշել, առանց ս եւ անպատեհութեան:

Քանի մը տարի առաջ, 1896ի վերջերը, տեղեկու-
թիւն ստացանք թէ հայաբնակ քաղաք մը այրելու, աւե-
րելու, բնակիչները ջարդելու պատրաստութիւններ կը

տեսնուին: Չերքէզները կամաց կամաց սկսած էին մո-
տենալ այդ քաղաքին, սպասելով խուճուճի նշանին: Մեր
բարեկամներէն մին այս տեղեկութիւնները հեռուէն թէ
մեզի հաղորդեց, և թէ Լոնտօնի ազդեցիկ քաղաքական
անձնաւորութեան մը, որ անմիջապէս Լոյս Սոյալիստ
դիմում ըրաւ: Միկնոյն ատեն մենք ալ գրեցինք Բարիչի
մեր բարեկամներուն, որոնց մէջ էր նաև այն ատեն հի-
մակուան «սխալ մը, սճիր մը» գործողը: Անոնք ալ քս-
ղաքական անձնաւորութեանց դիմում ըրին, որոնք Պ.
Հանսթի հաղորդեցին իրենց ստացած տեղեկութիւնները:
Եւ ահա քանի մը շաբաթ վերջը մեզի նորէն գրուեցաւ
թէ Չերքէզները ալ ետ քաշուեցան. աւերումի ու կոտո-
րածի ս եւ է վախ չմեաց: Ու իբրև ալ մինչեւ հիմակ այդ
քաղաքը ապահովութեան մէջ է:

Ինչ պէտք էր ընելիք. թմբակ գարնելով աշխարհի
իմացնելու էինք: Թէ շատ ուրիշներ, թէ մենք յաճախ
կ'իմանանք ծանր դէպքերու պատրաստութեանց տեղե-
կութիւններ, որոնց աւելի կամ նուազ ստուգութիւնը
սակայն ճշտել հնարաւոր չէ, նոյն իսկ կարելի է որ
բոլորովին անհիմն զրոյցներ շրջապային: Պարտականու-
թիւնն իս կը կայայանայ ուր որ պէտք է իմացնելու, եւ
ուշադրութիւն հրաւիրելու մէջ:

Գիւանագէտները լուսութիւնը կը սիրեն, եւ անգաղտ-
նապահութենէ կը խրտչին, և միշտ արտաքինք երկոյթ-
ները փրկել կուզեն: Եթէ կը փափաքին որ դիւանագի-
տութիւնը մեզի օգտակար ծառայութիւններ մատուցա-
նէ, հա՛րկ է որ հպատակինք քաղաքագիտութեան անս-
ղոքելի պահանջումներուն. ապա թէ ոչ մեզի բոլորովին
կը լքանն:

Կը վախնանք որ հիմակ Բարիչ քաղաքականու-
թեամբ գրադող հայ կուսակցութեանց ու անհատներու
«Հայրենասիրական» մրցումը գայ յանգի այն աղիտա-
րբէ հետեւանքներուն որոնք ուրիշ ասպարէզի մը մէջ
տեսնուեցան: Եւրոպա նստող կուսակցական վարիչներու
մրցումը որ 1890ին սկսաւ, ամենաժանր հարուածը
տուաւ Հայաստանի դատին: Գուցէ մտաւոր ապագայի
մէջ Պրանսոյցիներն ալ զգուցն ու ձեռք քաշեն մենէ:

Կը փափաքինք որ հանրային կարծիքը համբարա-
խութեան պարտաւորէ Բարիչ քաղաքագիտական ձեռ-
նարկներ ընողները: Ո՛չ որ պէտք է արտօնուի իր կու-
սակցական կամ անհատական ըմբռնութիւնն ու շա-
հերուն համաձայն շարժիլ: Խնդիրը ազգային շահե-
րուն վրայ է:

Մտքէ անցընելու չէ թէ Քլէմանսօ մը, Ժօրէս մը,
Քիլյար մը, Սնաթոյ Պրանս մը, և մեր դատին ուրիշ ջերմ
բարեկամներ, երէկ այսօր յանկարծ երևան եկան. ո՛չ, ա-
նոնք երկարատև աշխատութեանց ժառանգութիւն են:
Հարկ է շատ ետ երթալ, մինչեւ գոնէ հանդուցեալ Գաբ-
րիէ Էզնայանի օրերը, զիտնալու համար թէ Բարիչ
ինչ աշխատութիւններ կատարուած են, ու անընդհատ

չարունակութեամբ առաջ կը տարաբնակ

Անոնք որ անցեալին մէջ այդ աշխատութիւնները կատարած են, անոնք ազգին վտանգութիւնն ու համարումը կը վայելեն. կը փոփոպենք որ զգան թէ իրենց վրայ պարտականութիւն կը ծանրանայ թող շտապ որ ցուցամուտութեան արտաւոր մարմաջը համաճարակ դառնալով, մահամերձ վտանգէ կացութիւն մը որմէն յոյսեր ունենալու պատճառներ չեն պակոիր:

Ազգային աշակցութիւնը ապահովեալ կրնայ համարուիլ անոնց որ այո փրկարար պարտականութիւններ կատարելու ձեռնարկեն:

ԱՐՅՈՒՆՔՈՏ ՀՍՅԸ

2.

Կոյր բանաստեղծն ու հայ աւագակը գէժ առ գէժ են:

— Իս տեսնել կ'ուզէք, կը հարցնէ Գորա Օղլու՝ իր անգլիական լաւագոյն կերպովը: Համալսարանէն, հէ՛:

Այս վերջին հարցումը հտակնալու համար, գիտնալու է որ Օքսֆորտի կամ Գէմրիքի համալսարանէն ելլողները գիրար միշտ ընկեր կը նկատեն, նոյն իսկ իրարու անձանթ ըլլալով. ու Օքսֆորտի կամ Գէմրիքի համալսարանը յաճախած ըլլալուն յայտնութիւնը անմիջապէս տեսակ մը համերաշխութիւն, մտերմութիւն կը հաստատէ:

— Այո՛, կը պատասխանէ Գոլըն Գին. Սին—ճոն գոլէճէն:

— Ա՛հ, ես Մակտալէնն էի. Շատ աղէկ տեղ, Մակտալէնը, բայց սուղի կը նստի: Մակտալէնէն բաւական օգտուեցայ:

— Յուսամ թէ զուք ալ զինքը ճերմակ—երես հանեցիք, բայց կարող չեմ տեսնել թէ ատանկ երեւոյթ ունի՞ք: Միկանէ՞ք մը:

— Շնորհակալ եմ, կը մըմոյ աւագակը՝ զիմացինին անողոր հեզնութենէն կատրած. բայց մի՛ մոռնաք որ հոս Հայաստան ենք:

— Օ՛հ, չէ՛, վախ չի կայ որ մոռնամ: Շիտակը շատ սիրուն տեղ, մեր փորձառութենէն դատելով:

— Դեռ ծայրը չհասաք, կ'ըսէ Գորա Օղլու նշանակալից կերպով մը: Ինչի՞ կը պարտիմ այս այցելութեան պատիւը:

— Պիտի ըսե՛մ, կը պատասխանէ Գին հանգարտօ:

րէն: Այնչափ օքանչացայ այն ճարտարութեան զրայ որով ան տղան ձեռք անցուցիք, որ կ'ուզեմ զիտնալ թէ ի՞նչպէս բրիք: Գործին մէջ կին մը չկար:

Հայը կը սկսի հեզնօրէն խնայալ:

— Օ՛հ, այո, կնկան մը ձեռքով եղաւ գործը: «Գեղեցկութիւնը մէկ մազով մը մեղի կը քաշէ», զիտէ՛ք:

— Մազն կատու ունի, կը հեզնէ Գին՝ սիկանէթին մոխիրը թութուելով: Ինծի՛ նայեցէք, Մակտալէնցի՛ Պլաք, հիմակ որ տղան ձեռք անցուցիք՝ ի՞նչ պիտի ընէք զինքը:

— Պիտի խորվե՛մ: Յիցի մը պիտի կապեմ, և ողջ ողջ այրեմ զինքը:

Հայաստանցի Գորա Օղլուն է որ երեսն կուգայ՝ Մակտալէնցի Պլաքին տեղ: Հեղինակն է բողբոջ:

— Իս ատանկ բան չի ընե՞ր՝ եթէ ձեր տեղը ըլլայի, կ'ըսէ Անգլիացին: Օքսֆորտցիները ատանկ բան չեն ընե՞ր:

— Հայը միշտ Հայ կը մնայ:

— Անշուշտ, մինչեւ որ աւելի լաւ կրթութիւն Օքսֆորտ: Ներեցէք անանկ հասարակ ու չնչին խնդիր մը յարուցանելու, վրանից շատ ստակ ունի՞ք:

— Չէ՛, կ'ըսէ աւագակը չկամութեամբ: Անգլիա դըրամ ունիմ, բայց չեմ կրնար ձեռք անցընել: Պարագանները կ'արգիլեն:

— Այո՛, գիտեմ, պարագանները երբեմն ատանկ խաչքեր կը խսոնեն: Անշուշտ Միս Թրէստը սպաննելու միտք չունէիք:

— Չէ՛, չունէի: Չօպասած տեղս վրաս եկաւ, ես ալ... մոոցայ որ Օքսֆորտցի մըն էի:

— Այո՛, Օքսֆորտցիները պատաններ չեն սպաններ, կանոն է ասիկա: Ես ալ խորհեցայ որ զիպուած մը ըլլալու է:

— Ինծի համար շատ անհաճոյ զիպուած մը: Առանց ատոր՝ չի ստիպուեր նորէն աս անիծեալ երկիրը գառնալու:

— Անշուտ ասիկա շատ դժուար գալու է ձեր ճաշակներն ու սովորութիւններն ունեցող անձի մը: Բայց ձգենք ատոնք, ու գործի սկսինք: Անշուշտ մաքերնէզ չէք անցընե՞ր որ հաճոյքիտ համար ձեր ետեւէն եկայ:

— Չէ՛, չեմ կարծեր:

— Սիրտս ան տղուն շատ փակած է, կ'ըսէ կոյրը՝ ձեռքը երկնցնելով զէպի ան կողմը ուսկից էրաօգուօի ձայնը լսած է:

— Ես ալ զինքը կ'ատեմ, զիտէ՛ք կարծեմ:

— Օ՛հ, ատիկա հաշուի չի մտնե՞ր: Գործի մէջ սէր ատելութիւն չի կայ: Ո՛րչափ:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք կոր:

— Ըսա՛ծա:

— Ի՞նչը ո՛րչափ:

— Որչափ կ'ուզէք տղան ազատ ձգելու համար:
Գարա Օղլու կը վարանի:

— Ես զինքը ողջ ողջ այրել կ'ուզեմ, կ'ըսէ խոհուն
կերպով յը:

— Հաւագոյն է որ ատանկ բան չընէք. շուտով յը
կը լծնայ կ'երթայ: Նախ երկրէն փախչելու համար ո ե
է գրամ ձեռք չէք անցընէր. երկրորդ, իր բարեկամե-
քը ձեզի հանդարտ չեն թողուր ուզածնիդ ընելու:

Գարա Օղլու կը մտածէ:

— Այո՛, ատիկա շիտակ է, անշուշտ. բայց վրէժը
ստակէ կ'զի կ'արծէ:

— Պարա՛ւ խօսք: Վրէժ ըսածդ անմիջապէս կը հատ-
նի կ'երթայ: Ստակով մարդ շատ աւելի հեռու կ'երթայ,
մանաւանդ Բարիզ կամ Բեդրպուրի:

— Ա՛հ:

Ու աւագակին բերանը կը ջրօտի:

— Ըսէ՛ք նայինք, ի՞նչ կուտաք կոր, կը հարցնէ:

— Հազար ոսկի ըսե՛նք:

— Հազար ոսկին շատ տեւի՞ք բան յը չէ:

— Ոչինչէն շատ աւելի կը տեւէ:

— Շիտակ է, կ'ըսէ աւագակը վարանումի մէջ, ու
նայուածքը կ'ուզէ զկտի Էրասողուտի կողմը: Չէ՛, պի-
տի մեղքնեմ զինքը: Իր կանչուըսուըք իմանալ կ'ուզեմ
երբոր բոցերը խորվեն զինքը:

— Շատ աղէկ ան ատեն: Ա՛լ չխօսինք այս մասին:

— Բայց դուք, ձեզ ի՞նչ պիտի ընեմ:

— Օ՛հ, ես հաշուի չեմ առնուիր: Իմ մասիս հոգ
մի՛ ընէք:

— Ո՛չ, կ'ըսէ Հայը՝ Գինի համար տեսակ յը ընկե-
րական համակրութեամբ: Իրարու բազդակից ենք, հէ՛:
Աղջիկը երկուքնուս ալ երեսը նայիլ շուզեր:

Աւագակը, կորովամիտ հոգեբան, հասկցած է կոյր
բանաստեղծին խորունկ անսահման ուրը Ֆինկլայի
համար:

— Գարա՛ Օղլու, անհատական ներքին խնդիրներու
կը դպչէք կ'որ: Բարեկրթութեան օրէնքները Օքսֆորտ
մտնալու ձգելու չիք: Դժբաղդարար, կոյր ըլլալով, կարող
չեմ ձեզի-դաս յը տալ:

— Ես դաս առնելու պէտք չունիմ, կը քրթմնջէ Գարա
Օղլու: Անշուշտ եթէ տղան հոն դառնալու ըլլայ, աղ-
ջիկը հետը պիտի ամուսնանայ: Ես կը մտածէի որ լա-
ւագոյն պիտի ըլլար եթէ ինծի հազար ոսկի տայիք՝ տղան
մէջտեղէն վերցնելու համար: Ինծի նայեցէք, եթէ ասի-
կա ընդունիք, ութ հարիւր ոսկիով ձեզի ձեռ բարեկամե-
րուն կը դարձնեմ:

— Կ'երևայ որ շատոնց է Մակտալէնը թողուցեր էք,
կը պատասխանէ միօր, չորութեամբ: Վերջին անգամ
ըլլալով, եթէ դրամը երաշխաւորեմ՝ տղան անձաւս
պիտի թողու որ երթայ: Ես հոս իմ մասիս խօսելու
չեկայ:

Գարա Օղլուի դէմքը իր ներսիդին յուզուող ընդ
դիմամարտ զգացումները կը պատկերացնէ:

— Չինքը ազատ թողու՛ւ... Բարի՛զ... ա՛հ, յաղ-
թանակը Բարիզին կը մնայ: Այո՛, եթէ դուք իր տեղը
հոս կենաք:

— Օ հ, անշուշտ: Բաւական ատեն է որ ձեզի կը խա-
չեմ կոր. հիմակ կարգը ձերն է զիս խորվելու: Միայն
թէ, անանկ յը ըրէք որ աղան ո եւ է կասկած չունե-
նայ: Չեմ ուզեր որ գործը իրարանցումի տրուի: Եթէ
իրողութիւնը գիտնայ, երթալ պիտի շուզէ: Ես զինքը
շատ կը սիրեմ, ու յոգնած եմ ... Ինքզինքէն: Հոս եկած
ատենս մտքէս կ'անցնէր թէ պիտի կրնայի ասոր նման
պարագաներու մէջ օգտակար ըլլալ:

Գարա Օղլու այօքան մեծանունութեան հաւատալու
անկարող, կը կասկածի որ խաբէութիւն յը չըլլայ
գործին տակ: Եւ սակայն երկու մարդիկն ալ ասին
մէջն են:

— Ո՛րչափ պիտի ուզէի երկուքդ մէկէն խորվել,
կ'ըսէ յամբօրէն: Չեզի, օրովհետեւ ինծի բաներ յիշեցու-
ցիք գործնք մտնալ կ'ուզէի. միտինար խողը, որովհե-
հետեւ միշտ ատած եմ զինքը: Բայց չեմ կրնար թէ՛ եր-
կուքդ մէկ խորվել, ե թէ՛ գրամը ունենալ, ուստի պիտի
թողում որ ելլէ երթայ:

— Մակտալէնցիք խօսք:

— Մակտալէնցիք խօսք:

— Ուրեմն զինքը ճամբայ հաննեք: Ամէնէն առաջ իմ
մարդս երթալու է գրամը բերելու համար:

— Բայց ի՞նչ ապացոյց ունիմ որ...

— Ես սուտ չեմ խօսիր ե պառաւ կնիկներ չեմ մե-
ցնէր: Կա՛մ խօսքիս վստահութիւն ունենալու էք, կա՛մ...
Բարիզ չի կա՛յ: Թո՛մօրն, հոս եկուր:

Գրպանէն բանալի յը կը հանէ:

— Ատիկա իմ ճամբորդութեան գրասեղանիո բանալին
է: Մէջը հազար ոսկիի անզլիական պանքտոմօ պիտի
գտնես: Կ'առնես, ու այս իրիկուն ժամը հինգին այս
պարտնին կը բերես: Ինքը հոս պիտի ըլլայ: Եթէ ձեզ
վագցնես, զիրաւ գապթիկներուն կը հասնիս: Հտոկցա՛ր:
Թո՛մօրն կը վարանի:

— Էյ, դուք ի՞նչ պիտի ընէք, տէր:

— Օ՛հ, ես հոս պիտի մնամ իբր պատանգ: Յաջորդ
առտուն հետդ քաղաք պիտի վերադառնամ:

— Պ. Մարշալը:

— Ան ալ հոս պիտի մնայ:

Թո՛մօրն բոլորովին չի չհամոզուիր:

— Աղէ՛կ բան պիտի չըլլայ ձեզի այսպէս ձգելս, տէր:

— Օ՛հ, պարա՛ւ խօսք, Թո՛մօրն, ամէն բան կար-
գին է: Եթէ դուք երթալու չըլլաք, Պ. Մարշալի փըր-
կանքը վճարելու միջոց չի կայ:

— Լա՛ւ, տէր, եթէ հրաման կ'ընէք...

— Անշուշտ: Կրկնօցս ալ հետդ բեր: Գիշերը շատ

ցուրտ պիտի ընէ, յայտնի է:

Թոժորն ձեռքը զլիարկին կը տանի, եւ անմիջապէս ձածրայ կ'ելլէ:

— Հիմակ, կ'րո՞ւ քին աւազակին գանալով՝ զէ՛մքը ուրախութեամբ զեղուն, անշուշտ բարութիւնը կ'ունենայ, իմ ժարդո մէկ ժամուան ձածրայ տանելն ետքը, բայց ես խելացի գտնուելու և զինքը Թող տալու չէի: Այս իմ երիտասարդ բարեկամս «խօզ միտիոնարը» ազատ արձակելու: Չինքը ուրիշ ճամբէ մը զրկեցէք, որպէս զի Թոժորնին ետ գարձած առեւնը անօր չհանդիպի:

— Անշո՛ւշտ:

Քինի փափաքին համաձայն, ժամ մը յմտոյ Էրասոզուս իր կապերէն կ'արձակուի, ու իր ազատութենէն անմիջապէս կ'օգտուի՝ Գարա Օղլուի վրայ խոյանալու համար: Հայր՝ յովազի մը պէտ ուժով ու ճապուկ, զիւրաւ մը մէկդի կը նետէ ուժասպառ երիտասարդը, հեզնական խօսքերով:

— Հո՛ս եկէք, Մարշա՛լ, կը պոսայ քին, տղայութիւն մի՛ ընէք:

Էրասոզուս չկամութեամբ կուզայ:

— Կը սորվեցնէի իրեն, կ'ըտէ, բայց վրաս ուժ չէ ձեռքեր:

— Գրպանս բռնեաքի սրուակ մը կայ: Նա՛: Լեցուն ուժայ մը խմեցէք, ու ինձի մտիկ բրէք:

Էրասոզուս բռնեակը կը խմէ ու ինքզինքը աւելի լաւ կը զգայ:

— Դեռ ձեզի շնորհակալ չեզայ, կ'ըտէ սրտանց, եւ առեւս եկած ըլլալուդ համար: Առ օրիկան Միս Ուիլօրնը սագի մը պէս իրեն գործիք բրաւ: Ես մտածելու էի որ Միս Ուիլօրնի գիւրազուանութիւնը կրնար զինքը վտանգի աղբիւր մը գարձնել: Ինչ որ է, եղածը եղած է: Գարա Օղլուն ինչ պիտի ընէ ձեզի: Խեղճ հայրը կարող չէ ինձի համար փրկանք մը վճարել: Ասկից զատ, աս մարդիկը ամէն բան աշուրնին առած են. զուսնին— ու մերիններն ալ— Թեւեռնուն տակ գրեթէ կը պտրահին կոր:

— Հիմակ էն կարեւոր բանը այն է որ Միս Թոժոր Գարա Օղլուի ձեռքը շանցնի: Գիտէ՞ք ինչո՛ւ իր բովը կը դառնաք կոր:

Էրասոզուս տեղէն կը ցառէ:

— Դառնա՛լ: Ի՞նչպէս:

— Օ՛հ. ես ձեր փրկանքին գործը կարգադրեցի:

— Բայց ինչո՛ւ իմօ, եւ ո՛չ Թէ ձերը: Ես ձեզի հոս չեմ ձգեր: Ատանկ պարապ խօսքեր մի՛ ընէք:

— Ինձի մտիկ բրէք, կ'ըտէ քին՝ երիտասարդին թեւէն բանելով: Ես ձենէ տարէց եմ, սիրելի տղաս, եւ ըսածս զիտեմ: Ամէն մարդու կեանքին մէջ գերագոյն բոպէ մը կուզայ ուր երկու պարտականութիւն կը ներկայանան իրեն որոնց մին ընտրելու է: Եթէ շիտակ ընտրութիւնը ընէ, մա՛րդ մըն է, ու մնացեալը կարեւորութիւն չունի: Եթէ չընէ, մեռա՛ մարդ մըն է, լոկ խրատիլակ մը, ստուեր մը:

— Բայց չեմ հասկը...:

— Հի՛մակ, հի՛մակ: Փոխանակ ձեզի Անդրիա բեռել տալու, ապուշութիւն որի Թող տալու որ Միս Թոժոր Հայաստան գանալ, մինչդեռ պէտք էր խաղաղօրէն Պինկլորն Պար: Յանցանքը ձերը չէր եթէ ձածրայ ելաւ, բայց ես խելացի գտնուելու և զինքը Թող տալու չէի: Այս ամէնը սակայն հիմակ հին ազգաց պատմութիւն է: Միս Թոժոր հոս է. ու այս իրողութիւնն է որ աչքի տօձ ունենալու ենք: Չեր փրկանքը վստեցի, որովհետեւ եթէ այդպէս չընէի՝ Գարա Օղլու կտոր կտոր պիտի ընէր ձեզի կամ տանջէր:

— Բայց...:

— Սիրելի տղաս, միշտ այդպէս անհամբեր էք: Խօսքս մի՛ կտրէք: Ասկից զատ, աս օրիկան համբերութիւնը կորսնցնելու վրայ է: Ֆինկլայ պէտք ունի ձեզի: Կոյր մարդ մը լոկ բեռ մը պիտի բլլար իրեն: Իր մօտը պիտի դառնաք ու քովէն պիտի չբաժնուիք: Աշխարհիս մէջ միտակ բանն է որ ունիք ընելիք, և պէտք է որ ընէք:

— Շունէն ցա՛ծ ըլլամ եթէ ձեզի աս շանը ձեռքը թողում: Ամբողջ իմ...:

— Պիտի երթաք ու Ֆինկլային քովէն պիտի չբաժնուիք, էրիկ մարդու մը պէս:

— Չեզի պիտի չձգեմ:

— Պիտի ձգէք զիս, Ֆինկլայի օգտին համար:

— Ես հոս կը կենամ, կ'ըտէ Էրասոզուս յամառասար. աս օրիկան Թող ուզածը ընէ երկուքնուս այ: Դուք ինքզինքնիդ զօհելու չէք ինձի համար: Ահագին փրկանք մը պիտի ուզէ ձեզի համար:

— Սովազ պիտի դառնաք, որովհետեւ Ֆինկլայ ձեզի կը սիրէ և դուք ալ զինքը: Սովազ պիտի դառնաք, որովհետեւ ձեզի համար աւելի ծանր է երթալը քան հոս մնալը: Ֆինկլայ վտանգներով պաշարուած է. ձեզի պէտք ունի: Եթէ քովը չերթաք ու զինքը չպաշտպանէք, կրնայ այնպիսի վտանգ մը գալ իրեն որ ձեզի խենդեցնէ: Հասկցա՞ք հիմա:

Էրասոզուս զլիտիկոր կը մնայ, աշխատելով զօպել հեծկատուքը որ կը սպառնայ նոսեմացնելու իր էրիկմարդութիւնը:

— Բայց դուք... դուք... դուք ինչո՛ւ կ'ընէք կոր այն բանը: Ես ո՛վ եմ որ ինքզինքնիդ ինձի զօհէք:

Քին ձեռքը երիտասարդին ուսին վրայ կը դնէ:

— Սիրելի տղաս, դուք ամերիկացի ճէնթըմէն մըն էք: Ես մինչեւ հիմա չհանդիպեցայ ամերիկացի ճէնթըմէնի մը որ մերձէր պաշտպանել իր սիրած կինը: Ես զինքը չեմ կրնար պաշտպանել: Ես կոյր, անգոր, տարէց մարդ մըն եմ. ինք զիս չի սիրեր. ձեզի հօգուովը կը սիրէ. ու պէտք է որ երկուքնեւ մէկը հոս մնայ իր օգտին համար: Պարզապէս փրկանքի խնդիր մըն է աս: Եթէ գէշին գէշը պատահելու ըլլայ զիւրաւ կրնամ ինքզինքս զարնել: Վրաս ըկովովը մը ունիմ: Բայց բնաւ

հարկ չի կայ որ իմ մասիս մաստանջ ըլլաք: Եթէ զինքը կը սիրէք, եթէ զիս կը սիրէք, գացէ՛ք: Աշխարհիս մէջ ասկից աւելի ակնբեր պարտականութիւն եղած չէ: Գացէ՛ք:

— Բայց զո՛ւք, զո՛ւք:

Ու հեծկատուքը կը խեղդէ հիմա խեղճ երիտաւորը:

— Կոյր մարդու մը կեանքը քննէ ձեր... ու անոր կեանքին ջուր: Քսան տարի է լոյսը տեսած չեմ: Հիմակ, լոյսին կ'երթամ կոր: Ճամբան մութ էր ու սրտիս բաղձանքին չհասայ: Սիրելի տղաս, պէտք չէ որ աս սրիկան ձեր լալը տեսնէ: Ելէք գացէք ասկէ: Յիշեցէք որ Ֆինկլա այս անցած դարձածը գիտնալու չէ: Ասկից գատ, Գարա Օղլու քարայրը պիտի երթայ: Դիւրաւ կըրնաք քարայրը պաշարել եւ զիս ազատել:

— Չե՛մ կրնար ձեզի ձգել, չե՛մ կրնար: Օ՛ն, մէկ տեղ փախչի՛ք: Ես կրնամ զիւրաւ ձեր ձիուն ջուրէն վազել:

Քին պուխը կը թռթռէ:

— Խո՛սք տուի: Սին. Ճոնցի՛ Քինը խօսք տուաւ Մակտալէնցի Գարա Օղլուին: Ուրիշ բան չի կայ ընելիք, սիրելի տղաս, բայց եթէ էրիկ-մարդու պէս վարուիլ, ու երթալ:

— Բայց ա՛ն... ա՛ն... կը մըռնչէ երիտասարդը, թեւը անցընելով Քինի ճիտէն, մինչ կոյրը իր վրայ կը հակի:

— Անիկա այնպէս գիտնալու է որ զուք բնաւ տեղեկութիւն չունիք իմ հոս գալէս, և այնպէս կարծելու է որ զուք ասկից փախաք: Ա՛լ գացէք, սիրելի տղաս: Թոմսընին ըսէք որ բերանը չբանայ: Երջանիկ սիրով ուրախ եղէք բոլոր կեանքերնուդ մէջ: Է՛հ, մնաք բարով:

Դանդաճող քայլերով Էրաստու ճամբայ կ'իյնայ, ետ կը դառնայ, կը մեկնի, նորէն ետ կը դառնայ, նորէն ճամբայ կ'իյնայ կոյրի մը պէս զէպի առաջ օայտաբերելով, մինչ մայրամուտըն ճառագայթումը կը նշողէ Քինի զէմքին վրայ: Էրաստու վերջապէս կը սկսի վազել: «Ո՛չ մէկ մարդ աւելի մեծ սէր մը ունեցած չէ» կը հառաչէ, ու երեսի վրայ գետին կ'իյնայ: Յետոյ ոտքի կ'ելլէ ու կը վազէ:

Այդ զիշերը, երբ Գարա Օղլուի սիրտը զինիով զինսովցած է եւ արեան ծարաւով լեցուած, Քինի մօտ կուգայ՝ որ քարայրին մէկ անկիւնը նստած կ'երազէ իր անլոյս աչքին առջեւէն անցած շատ մը բաներու վրայ:

— Քին, Սին. Ճոնցի՛ Քին, կ'ըսէ աւազակը զինութեան կլիթիկներով, փարաները առի՛: Հէ՛, ինձի՛ նայէ, փարաները առի, զրպանս են: Կրակը պատրաստ է: Վերջին ժամը եկա՛ւ:

— Մակտալէնցի՛ Գարա Օղլու, ինձի հինգ վայրկեան տուէք՝ աղօթքս ընելու:

Ու մինչդեռ Գարա Օղլու այս յապաղումէն ջրթմն-

շելով, կրակին ջուր կ'երթայ զողողուն քայլերով, Քին ըկվովոր կը հանէ, սրտին վրայ կը դնէ ու կրակ կ'ընէ:

Գինովի մոլեգնութեան մը մէջ, Գարա Օղլու կ'աշխատի մեռած մարմինը գէպի խարոյկը քաշել, բայց կը գայթէ, իր զոհին վրայ կը զլտորի կը փոսի, ու քեշ ետքը կը սկսի խորհալ:

Լ. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԳՐՈՂՆԵՐՈՒՆ

Արտասահման գտնուող Հայաստանցի երիտասարդները երբեմն երբեմն մեզի գրութիւններ կը զրկեն: Ինչ սր կը ստանանք ուշադիր կարգաւոր կը տեսնենք թէ օրագրութեան աշխատակցելու փափաքողներէն ոմանք թիչ մը աւելի աշխատութեամբ կարող պիտի ըլլան ուշագրաւ յօսուածներ հրապարակ հանել: Եւ սակայն ամէնքն ալ կը սխալին նրկութեան ընարութեան մէջ: Բանաստեղծներու կամ փրկիտփայելու փափաքէն բնուած են, ուստի և ամլութեան կը դատապարտուին: Ինչո՞ւ երկինքները արփաթեւելու կամ անյատակ անզունները խորասուզելու փարձեր ընել, սինչ բերազգի ուրախութիւններով ու արտասուքներով բազմազգուն կեանք մը մեզի-կը շըրջապատէ, որուն մէջ կ'ապրինք ամէն օր: Հայաստանցի հայը որ զրել կը ըզձայ, իր յիշատակներսն մէջ երբեք չընչնշմարեր հեռաւոր հայրենիքի մը ապրած կեանքին զուարթութեամբ կամ միգրացաւ պատկերները: Ինչո՞ւ գաւառեց շնկարել: Եւրոպա, Ամերիկա տեղափոխուած հայը միշտվայրերու տարբերութեանց ուսումնասիրութեամբ կարող չէ՛ նոր գաղափարներով օգտակար ըլլալ իր ցեղին:

Գրելու փափաքին ընզունակութիւն ունեցող Հայաստանցի երիտասարդներուն, ու անոնց հետ Պոլսեցի երիտասարդներուն ալ, ուշագրութեանը կը յայձնարարենք Ֆինկանտայի ժողովրդական գրականութիւնը, որուն վրայ Մոշրճ հանդէսը ընդարձակ տեղեկութիւններ տուած է, որոնցմէ կ'օգտուինք մեր ընթերցողներուն համար:

* * *

Ֆինկանտայցիները մինչեւ վերջացած գարուն կէոր ո՛չ հին, ո՛չ նոր գրականութիւն ունէին: Աստուածաշունչն ու քանի մը ազօթագիրք ազգին ամբողջ մատենագրական հարստութիւնը կը ներկայացնէին: Ու քառասուն յիսուն տարուան մէջ բարգաւաճ մատենագրութեան տիրացան: Հազիւ հազ կարգաւ զրել զիտցող խումբ

մը մարդիկ կարող եղան գրական նոր զպրոց մը հաս-
տատել ժողովրդին ուշադրութիւնը գրաւել, ու ազգել
միանգամայն երկրին օրէնսդրութեանը վրայ:

Այդ գրական զպրոցին հիմնադիրն է Գիւրգարի Բէյ-
վերինդա անունով հասարակ գեղացի մը, 1827ին ծնած,
որ կեանքին մեծագոյն մասը գեղն է տնտեսացած: Այդ մար-
դը զիր եւ ընթերցում ծնողքէն ու ընկերներէն սորված էր.
տասերկու տարեկան եղած ատեն արգէն իբր հասարակ
քանուոր կ'աշխատէր: Կեանքին մէջ երբեք ուրախութիւն
տեսած չէ, եւ շատ անգամ տնօթի Պատու պարտա-
ւարութիւն է:

Օրին մէկը Բէյվերինդայի օտքը կը կոտորի, եւ կը
օտիպուի երկար ատեն անկողին Պատու. ձանձրոյթին
փարատմանը համար կը մտածէ թուզթի վրայ նետել իր
կենսադրութիւնը: Բնական խելքի եւ գատաղութեան տէր
մարդ, լաւ կը հասկնայ որ պատմելով իր կեանքը, պատ-
կերացնելով իր աղքատ վիճակը, ինք նկարագրած պի-
տի ըլլայ ամբողջ Ֆինլանտայի պէտքերը. ու իր պատ-
մածները պիտի կրնան օգտակար ըլլալ երկիրը կաւա-
վարողներուն. եւ ահա 1870ին հրատարակեց իմ կեանքը
անունով գրքոյկը, որ գեղարուեստական յատկութիւններէ
թէն զուրկ, բայց ընթերցողին վրայ ազգեցութիւն կը
թողու: Մանրամասնօրէն նկարագրելով Ֆինլանտայի
գեղացիին շարքաշ կեանքը, գէպքերը, վշտերը, Բէյվերին-
դա մեծ ծառայութիւն մատուց Ֆինլանտան վերանորոգելու
աշխատող կառավարութեան: Այդ գիրքը շատ օգտակար
եղաւ հրապարակաստեաններուն, եւ ընթերցասիրութիւնը
կը տարածէր հասարակ ժողովրդին խաւերուն մէջ:

Բէյվերինդայի գրքին գտած յաջողութեամբը ուրիշ-
ներ ալ անոր օրինակին սկսեան հետեւիլ: Հետզհետէ
երևան եկան նոր գրողներ որոնք կարգալ գրել մը գի-
տէին միայն: Ասոնք երբեք յաւակնութիւն չունեցան
գեղարուեստական երկեր ստեղծելու, բայց աղքատիկ և
խեղճ կեանքի մասին իրենց նկատողութիւնները սեր-
խութեամբ կը հաղորդեն ընթերցողներուն:

Ու ծնաւ Ֆինլանտացի ժողովրդական գրողներու,
կամ աւելի ճիշտ՝ հրապարակաստեաններու զպրոց մը, որոնք
իրենց գրուածքներուն միպակի ձեւ կուտային: Այդ վի-
պակները, թէեւ արուեստի հրապարակներէն զուրկ, բայց
և այնպէս այնքան հետաքրքրական երևցան որ եւրօպա-
կան շատ լեզուներով իսկ թարգմանուեցան: Բայց այդ
գրուածքներուն մեծ ազգեցութիւնը Ֆինլանտացի ժողո-
վրդին վրայ եղաւ:

Բէյվերինդա ժողովրդական գրողի անուն վաստակելէ
յետոյ սկսաւ աշխատակցիլ Ֆինլանտական լրագիրնե-
րուն, որով իր տնտեսական վիճակը լաւացաւ: Գեղա-
ցիները սկսան զինքը շատ սիրել եւ յարգել. ու երեսփո-
խան ընտրեցին իրենց ազգային ժողովին. ժողովրդա-
կան այդ գրողը դեռ օղջ է, թէեւ այլ՝էս չի գրեր:

Գիւրգարի գրականութեան զպրոցը կ'արհամարհէ
օճի գեղեցկութիւնը եւ նորութիւնը, կ'ընդունի միայն ինչ
որ ժողովրդին օգտակար է. գեղացի հեղինակներուն
գրութիւնները ճշմարտութիւն և անկեղծութիւն կը փայ-
լեցնեն, արհամարհելով գեղարուեստական հնարքները,
զորս կեղծութիւն կը համարին: Իրաւ է որ այդ գրա-
կանութիւնը կը զուգահեռ պիտի անուանուին թուականի
մը, երբ հրապարակին վրայ այնքան էական խնդր-
ներ կան որ մարդիկ բուն գեղարուեստի համար ոչ մա-
մանակ ունենին ոչ ալ փոփառ. Ֆինլանտայի մէջ ոչ մի-
այն գրողները, այլ եւ գիտնականները իրենց բոլոր ու-
շադրութիւնը ժողովրդին բազմակողմանի կրթութեանը
նուիրած են:

Այդ գեղացի հեղինակներու գրութիւններէն մէկ քա-
նին հայերէնի թարգմանուած են կովկասեան բարբառով.
մենք կը փոփառէինք անոնք մեր աշխարհագրին վե-
րածուած անունը, իբր գործնական օրինակներ անոնց որ
ուզեն այդ միենայն զպրոցը հիմնել մեր մէջ:



Շատ անգամ Հայաստանցիներու բերաններէն եր-
կար պատմութիւններ լսած ենք, ու տեսած ենք թէ շա-
տերը պատմելու ախարժեի եղանակ մը ունին, այնպէս
որ իրենց խօսածները եթէ առանց ո եւ է փոփոխութեան
գրի անուին, մեծ հաճոյքով պիտի կարդացուին: Մեզ
ժողովրդական բանաստեղծութեանց մէջ ալ կը գտնենք
այնպիսի գեղեցկութիւններ որոնցմէ զուրկ են մեր զը-
րագէտ—բանաստեղծներէ շատերուն ոտանաւորները:

Վերագոհանալով ուրեմ անոնց որոնք գրելու փոփառ
ունին, ու յաջողելու համար ֆաւական յատկութիւննե-
րով օժտուած են, կը յանձնարարենք որ միանգամ ընդ
միշտ « Հրամարիմը ի օտտանայէ » նը ըսեն ոտանաւորին
ու իմաստասիրութեան: Ու անգամ մը որ իրենց մտքի-
անկախութիւնը գտնեն, թո՛ղ սկսին յիշել ինչ որ հայ-
րենիքը տեսած են, թո՛ղ զիտեն ինչ որ իրենց շուրջը կը
տեսնեն հայ շրջանակներու մէջ: Թող խորհին ու գրեն:
Ոտանաւորի ու փիլիսոփայութեան զսկած իրենց աշխա-
տութեան մէկ մասը նուիրելով հայ կեանքի ուսուեա
սիրութեան, պիտի յաջողին տեղ մը գրաւել մեր գրակա
նութեան մէջ, եւ օգտակար ըլլալ իրենց ժողովրդին:

ԻՆՍՅՐԵՆԱՍԻՐՍՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ

ՔԱՐԻՉ, Մարտ 20

Մարդիկ կան որ անպատճառ կ'ուզեն պատժութիւնը իրենց կեանքին մէջ մտած օրէն սկսցնել. կ'ուզեն որ իրենց առաջին շարժումէն, առաջին գործէն, առաջին ձեռնարկէն թուագրուի պատժական շրջաններու պատկանող մեծ ու բազմադիմի հարցերու ծագումը:

Ասոնցմէ մէկն է Բարիզ երբեմն երբեմն հրատարակուող հանդէսին խմբագիրը. ու եթէ իր հանդէսին մէջ իր անձնական փառաբանութեան երկարապատու սիւնակներուն հաւատարու միամտութիւնը ունենանք, այնպէս պիտի կարծենք որ Փրանսայի ու մասնաւորապէս Բարիզի մէջ Հայոց ի նպատակ շարժումը իր Պոլիսէն յատկապէս մեկնած ու Բարիզ ոտք դրած օրէն կը սկսի:

Ասիա պարզապէս երկնուան պատժութիւնը խեղաթիւրել է: Ու ասիկա աններելի, անընդունելի օրինակ մըն է:

1884ին ի վեր է որ Բարիզի հայերը զբաղած են իրենց գատը Եւրոպայի ճանչցնելու, ո՛ր այսօր Հայութիւնը նորէն նորէն ճանչցնելու ելլողները՝ պէտք է նախ հայ գործունէութեան պատժութիւնը չուրանալու տարրաւնան պարկեշտաբէնք ունենան:

Չունիմ ձեռքիս տակ բոլոր թուղթերն ու թերթերը հայկական դատին վերջի տարիներուն Եւրոպայի մէջ գտած ծաւալումը պատմելու համար. սակայն ըստ եղածները կը բաւեն ցոյց տալու թէ Բարիզի Հայերը ըրած են իրենց պարտականութիւնը, ու կը շարունակեն, առանց աղմուկի, առանց անձնական սնափառութեան:

Առաջին անգամ 1884ին Բարիզի հայ գաղութէն չորս անձ, որոնց համեստութիւնը կը պահանջէ իր իրենց անունը չի տամ, զաղափարը կ'ունենան հայրենասիրական ընկերութիւն մը հիմնել, Ասօսիասիօն Բաղրիօղիք Որսէնիկէն անունով, որուն նպատակը եղած է Հայոց արդար պահանջներուն փաստաբանը ըլլալ Եւրոպայի մէջ: Ընկերակցութիւնը անմիջապէս գործել սկսած է, ու վճարեալ ու Էմիլըման թերթերուն մէջ յօդուածներ հրատարակած, ուր Հայոց վիճակը պարզել յետոյ կը յիշեցնեն թէ Պերլինի դաշնագիրը Եւրոպայի մէջ մոռցուելու վրայ է, զինաւորաբար Հայաստանի մէջ բարենորոգմանց ծրարագիրը: Այս յօդուածները հրատարակուած միջոցին հայկական խնդիրը դեռ լրագրութեան մէջ գոյութիւն չունէր:

Բարիզի Բոմբիէին նախագահը յարգելի Պ. Իօզէակեր, որ նմանապէս խնդրած էր մինչ իր անունը չի յիշել, սակայն պատժութեան առիտ իր դերը ու գործը

ճշտելու համար կը խնդրենք իրմէ որ ներողամիտ ըլլայ այս հրատարակման: Պ. Իօզէակեր Ֆրեանկի ֆրանսական կառավարութեան զուտը անցնելուն առիթէն օգտուելով, նամակով մը կը խնդրէ որ ընդունի Հայոց ուղերձը եւ ունկնդրութիւն մը տայ: Ասիկա կը պատահէր 1886 ին:

Ֆրեանկէ կ'ընդունի հայ գաղթականութեան անգամները, որոնք պարզել յետոյ իրենց դատը, խորհուրդ կ'ուզեն: «Ֆրանսա, կ'ըսէ Ֆրեանկէ, այս պահուս չի կրնար Հայոց ի նպատակ նախաձեռնութիւն ունենալ. Անգլիոյ դիմելու էք. երբոր Անգլիա սկսի հայկական դատով զբաղիլ այն ատեն կրնանք օգնել:» Հետեւեալ օրն իսկ Պ. Իօզէակեր անմիջապէս Լոնտոն կը վազէ՝ հոն ալ Բոմբիէ մը կազմելու համար: Այսօր գիտենք թէ Լոնտոնի Բոմբիէին ինչ հզօր կազմակերպութիւն մը ունեցաւ, ի՞նչ գործունէութեան կոնք մը մղեց, ու գիտենք թէ ո՛րքան կրցաւ փրցնել տալ Հայը ու Հայուն դատը Անգլիոյ մէջ:

Դարձեալ 1886ին է որ Սպանիոյ հանրապետութեան նախկին նախագահ տիեզերական Էմիլիօ Գասթելաոի Բարիզ գալուսն առթիւ Հայերը օգտուիլ ջանացած են, ինչպէս կ'ընէին արդէն ամէն պարագաներու մէջ որոնք կրնային քաղաքական որ եւ է օգուտ մը ունենալ Հայուն:

Էմիլիօ Գասթելաոի, որ ազգերու ազատութեանը համար միշտ կոտուած էր, «Ալիանս Կոնցո-լազին»էն հացկերոյթի հրաւիրուած էր 1886 նոյեմբեր 4ին: Բարիզի Հայերը կը մասնակցէին այս ճաշին ուր ճառեր կը խօսուէին Հայոց ու Հայաստանի կացութեան վրայ, Հայերէ ու Ֆրանսացիներէ:

Տասը օր յետոյ Հայերը, իրենց կարգին, կը հրաւիրեն Գասթելաոը Ֆրանսացի լրագրողներու, երեսփոխաններու, զբաղէտներուն ամբողջութեան մը մէջ հօնչի մը: Հարիւրէ աւելի նշանաւոր անձներ ներկայ են եղած. Բացակայները շանոնք որ չեն կրցած գալ, զրկած են իրենց նամակները Հայրենասիրաց Միութեան, որոնցմէ մէկ քանիները կը դնեն հօս, որովհետեւ անձանութիւններէ չեն ստորագրուած:

Արտաքին գործերու նախկին նախարար Պ. Պարթէլլի միջոցով Մէնդի-Իլէն կը գրէ. «... Սրտով ձեզի հետ եմ Հայաստան զոր դուք կը ներկայացնէք, իր այնքան արդար պահանջութեանովը՝ Եւրոպայի բովանդակ աշակցութեանը արժանի է: Հայաստանի մասին իմ զգացումներս փոխուած չեն, և առոր մէկ նոր ապացոյցը պիտի տամ՝ Ժոռնալ առ Սափանի մէջ զբաղելով Բրիտանիայ Հայաստանի իր գրականութեան մասին, Պ. Միլիքո Նէվի հրատարակած մէկ զբեռովը:

Ժիւ Սիմոն կը գրէ. «... Ինձի շատ հաճելի պիտի ըլլար գտնուիլ ժողովուրդ հետ օրոնք, իրենց ազգայնութեան փորձանքներուն մէջ, հայրենասիրութեան բոցը կը պահեն:

Ակադեմիայի անդամ Մէզիէ. սեփ Լուսնցի եւ, ուստի աներորդ է ըսել որ տառապող ժողովուրդները իրաւունք ունին իմ բոլոր համակրութեանս: Բաւոր քրտովս կ'ընկերակցիմ հայ ազգին պահանջութեանս:

Ուրիշ բազմաթիւ անուններու մէջէն յիշեմ յատկապէս Անադոլ Լըռուա-Պոլիէ, Ալպէս Վանտալ, Ֆրէտէ-րիք Բասի, Ժողէֆ Ռէնաք, որոնք Հայոց ու հայկական գատին համար համակրական տողեր գրած են: Այս հայասերները, չմոռնանք, 1886ի արդէն հայկական գատը ճանչնալու առիթը կ'ունենային այսպէս:—Հայ-րենասիրաց Միութիւնը բոլոր այս նամակները հրատարակած է շատ շահեկան տետրակի մը մէջ, որուն սկիզբը երկու յառաջաբան կայ. առաջինը՝ որ հայկական գատը կը պարզէ, եւ երկրորդը՝ որ Հայաստանի անցեալին, ներկային ու մանաւանդ ապագային կատարելիք գերին վրայ շատ ուշագրաւ տեսութիւններ կը պարզէ:

Այս երկրորդ յօդուածը գրած է Պ. Ժան Պրուսալեան, որ այն ատեն Հայրենասիրաց Միութեան քարտուղարն էր, և որ յետոյ «Հայաստան»ը հրատարակեց Պ. Միհրան Սըվազլեանի հետ: Պ. Պրուսալեանի առումը այսօր չի յիշուիր դժբաղդաբար, ու առիկա մեծ անիրաւութիւն մըն է: Երոպայի, բայց մանաւանդ Ֆրանսայի ու Բարիզի մէջ, աննկուն ջանքեր ու ձեռնարկներ ըրած է ինքը հայկական գատը ճանչցնելու և աւար շուրջը թանկագին ու տեւական համակրութիւններ ստեղծելու: Տեսարակներով, յօդուածներով, բանախօսութեամբ՝ անդու աշխատած է, և Ֆրանսայի գաւառական բոլոր կարեւոր քաղաքները պտըտած ու մեզի համար բանախօսած: Ու գիտենք որ իր ու Պ. Սըվազլեանի (որ, իր կողմէն Անգլիոյ մէջ հայանուէր ընդարձակ գործունէութիւն մը ունեցած է) ֆրանսերէն «Հայաստան»ին պէս լաւ խմբագրուած ու կապէս օգտակար եղած թերթ մը ունեցած չենք:

Այս միջոցիս ձեռքիս տակ ունիմ Ռոլֆի Ֆասանսկը որուն 1886ի թիւերուն մէջ Պ. Պրուսալեան ընդարձակ ուսումնասիրութիւն մը ունի Հայաստանի եւ Հայոց մասին: Առաջին ակնարկով մը իսկ մարդ կը տեսնէ թէ ինչ խնամով պատրաստուած աշխատութիւն մըն է առիկա. ուսուցիկ ու պարագայ խօսքեր չկան հոն, հապաքաղուածներ ու յիշատակութիւններ Հայոց մասին հին ու նոր եւրոպական բազմաթիւ գրքերէ, զորոնք հեղի նակը քննել, բաղդատել է, գիտնականի խղճամիտ աշխատութիւն մը կատարելով, կատարելապէս տէրը ըլլալով իր ներկայացուցած նիւթին:

Այդ Ռոլֆի Ֆասանսկը և իր տնօրէնը Պ. Էօսէն Մաւպօ շատ կարևոր օժանդակներ եղած են Հայրենասիրաց Միութեան:

Դարձեալ, կը տեսնենք որ 1886ին, հոշակաւոր իրաւագէտ Պ. Լուի Մընօ, որ վերջէն Ֆրանսայի կողմէ Լա Հէյի Խաղաղութեան Համաժողովին պատուիրակ

ղրկուած է, Բարիզի Իրաւագիտական վարժարանին մէջ հայկական գատին վրայ բանախօսութիւն մը ըրած է, ինչպէս Անադոլ Լըռուա-Պոլիէ և Ալպէս Վանտալ ալ Գաղաքական գիտութեանց վարժարանին մէջ:

Իմ դիտարութիւնս օակայն Ֆրանսայի մէջ հայկական գատին ծաւալման մանրամասն պատմութիւնը ընել չէ այստեղ: Ատիկա ընդարձակ գործ մըն է, որ մանրակրկիտ ուսումնասիրութեան մը կը կարօտի, բայց որ պէտք է անշուշտ որ մը կատարուի, ո՛չ միայն Ֆրանսայի այլ եւ եւրոպական բոլոր երկիրներուն համար: Իմ նպատակս էր ըսկ վեր ի վերոյ գաղափար մը տալ անցեալ գործունէութեան մը վրայ զոր այսօր մոռացութեան տալ ուղողներ կան:

Վերջացնելէ առաջ, դեռ երկուան պատմութեան մէկ քանի պատիկ կէտեր ալ ճշդենք, որոնք չենք գիտեր ինչո՞ւ կը խեղաթիւրուին:

Կարծեմ ամենուն միտքն է տակաւին թէ Բարիզի հայ ուսանողութիւնը 1895-96ին արդէն մեծ միջիններ պատրաստած էր Բարիզի մէջ, ուր Ֆրանսացի ատենաբաններ խօսք առած էին հայկական խնդրոյն վրայ իրենց տեսութիւնը պարզելու ֆրանսացի ունկնդիրներու առջև: Կը յիշեմ տակաւին Ռօշֆօնի, Տրէֆուօի խնդիրէն առջի Ռօշֆօնին, նախագահութեամբ կազմակերպուած երեկոթը, որուն հետեւեալ օրը, կիրակի մը, բոլոր Բարիզի մէջ քաղցածները պտըտցուցին հանդիսաւոր Էնթրանցիմանը որուն ճակտին վրայ խոշոր գիրերով գրուած էին Ռօշֆօնի յօդուածին վերնագիրը ու «Բողոքի միթիկ» բառերը:

Ուրիշ կէտ մը: Թէ՛ Ռօշֆօնին եւ թէ՛ տիկին Սէվոնին Հայոց համար առաջին նամակը գրած ու առաջին դիմումը ըրած է Պ. Իսքէնտէր, երբ տակաւին ուրիշներ «չէին հետաքրքրուիր ազգով ու ազգային գործերով»: Պ. Իսքէնտէր ըրած է այս դիմումները ոչ թէ իբրև անհատ, ինչ որ արդէն պատիւ կը բերէր իրեն, այլ հաւաքական մարմնի մը կողմէ, Բարիզի Հայրենասիրաց Միութեան կողմէն, ինչ որ ալ անելի ուժ կուտար մեր գատին: Տիկին Սէվոնի գրաւոր պատասխանը կայ Պ. Իսքէնտէրի քով, որով մեծանուն հայասեր տիկինը կը խնդրէ տեղեկութիւններ տալ առաջին յօդուածի մը համար:

Ուրիշ մանրամասնութիւն մը: Կեցողականի դասընկերներ էին որոնք Բարիզէն մեր ակնարկած խմբագրին գրեցին մէկէ աւելի նամակներ, զորոնք այդ խմբագիրը, որ իր մասին ամենաչնչին կէտ մը անգամ չի փախցնել, հիմա անշուշտ մոռցած է, թէ անպատճառ Պոլիէն, կը ըսկին մէջէն ուրեմն, նամակներ գրելու է Բարիզի թերթերուն: Կը մոռնայ նմանապէս թէ Բարիզի իր ընկերները, ու նախկին դասընկերները՝ գրած են իրեն, խնդրած են որ ինք ալ Բարիզ գայ իրենց միանայ ու աշակցի իրենց հայանուէր գործունէութեան:

Լիպրը Բասուլին մէջ երկցած յօդուածներուն նախնական պատճառը գարշեալ Հայրենասիրաց Միութիւնը եղած է. Պ. Խոքէնտէր որ կատարուած գործին առջև իր անձը մտնալու համետութիւնը ունեցած է միշտ, կրնայ է հարկին այս ամէնը ապացուցանել: Իրեն կը պարտինք նայնպէս «Հայաստանի Ղարղերը» ֆրանսերէն գրքին հրատարակութիւնը, որուն մէջ գտնուած նամակներուն մէկ մասը Պ. հրատարակիչը թարգմանեց, իսկ Հայրենասիրաց Միութիւնը տուաւ բոլոր պաշտօնական նամակները, ինչպէս եւ գրքին հրատարակման նախնական ծախքերուն մէկ մասը, պայմանաւ որ ծախուած գիրքերուն արդիւնքն մէկ կողմ դրուի ուրիշ հրատարակութեանց համար:

Բարիդի Հայրենասիրաց Միութիւնը շատ բաներ ըրած է քաղաքական տեօակէտով, պատմական, նոյն իսկ գրական նկատուիներով, բայց ոչ մէկ տեղ տեօած ենք իրենց անձին ու ըրածին վրայ փոստաբանութիւններ: Պ. Խոքէնտէր, իրոս նախագահ այդ ընկերակցութեան, ու իրրու անհատ, շատ մը բանախօսութիւններ ըրած է Բարիդ ու Լոնտոն, երեկոյթներու մէջ ու ընկերութեան առջեւ, առանց երբեք իր անձը առաջ քշելու, հապա միշտ աչքի առաջ ունենալով իր ծառայած դատին բարձրագոյն շահերը:

ՏՐԴԱՏ ԱՐՈՄԵԱՆ

ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍԸ

Շարունակորիշն

է.

Կուլտամեանց եւ ինձէլտուրեանց ուղղուեցան Բերայի Մեծ Փողոցին վրայ գտնուած գարեջրատուն մը: Ճամբան վիճարանութիւն մը բացուած էր երկու յեղափոխականներուն միջեւ ապագայ անկախ Հայաստանի մէջ ի գործ դրուելիք կրթական ծրագրին մէկ քանի կէտերուն մասին: Կուլտամեանց կը պահանջէր որ՝ քննութեան ժամանակ՝ հսկող օգնականները իրաւունք ունենային աշակերտներու տրուելիք թիւերուն վրայ դիտողութիւն ընելու, իսկ միւսը կը պնդէր թէ զսաստուններէն դուրս ոչ ոք պէտք էր միջամտէր այդ խնդրին: Վէճը այնչափ տաքցաւ որ երբ գարեջրատուն հասան, ինձէլտուրեանց մոռցաւ իր անօթութիւնը եւ երկու պօք ապսպրեց: Բանակախը սակայն երկու բաժակ գարեջրով լուծուելու հանգամանք չունէր, եւ հազիւ չորրորդը պար-

պելէ ետքը կրցան խնդիրը փակել, շարունակութիւնը հետեւեալ օրուան Թողլով:

Ճաշը Հայրենասիրական վառ խօսակցութիւններով անցաւ: Ինձէլտուրեանց կախեթու գինին գովեց, կուլտամեանց դիտել տուաւ թէ Փոքր Հայքի մէջ ալ կային աղէկ գինիներ:

— Ա՛խ: մեր հայ աղջիկներու ձեռքով քաղուած խաղողի անարատ գինին:

— Ա՛հ, մեր հայ գիւղացու քրտինքով ողողած որթերու գինին:

— Ա՛հ, մեր պապենական օճախի կարմրորակ գինին:

— Է՛հ, մեր հօրենական երդիքի անուշահամ գինին:

— Վա՛հ, մեր այգեօտանու հոտաւետ գինին:

Բայց, աւա՛ղ, մեր գտնել այդ Հայրենասէրներուն անշիջանելի ծարաւը յագեցնելու կարող Ակոռիի կարասները: Խեղճերը սախուեցան զոհանալ կէօգ-թէփէի գինիով:

— Համարեա՛ թէ Սուլթանին արիւնն ենք խմուծ, ըսաւ ինձէլտուրեանց, անգամ մը ես համաձայնեցնելով ազգասիրութիւնը պարագաներու անմիջական հանգամանքին:

Ճաշը աւարտելուն՝ Սուլթանը երեք շիշ պակաս արիւն ունէր: Երբ երկու հերոսները «կերան եւ ըմպեցին բոս դիւցազանց պայմանի» զգացին թէ խահուէ մը անհրաժեշտ էր այս ապերախտ ազգին փրկութեան ծառայող անձնագոհներուն մարտողութիւնը դիւրացնելու համար:

Սպասաւորը սուրճը բերաւ:

— Սա քովս գտնուած կրամներուն խնդիրը ի՛նչպէս պիտի կարգադրենք, հարցուց Կուլտամեանց որ վայրկեանը եկած համարեց այդ հրատապ հարցը մէջտեղ նետելու:

Ինձէլտուրեանց ժպտեցաւ: սիկարէթ մը ուզեց ընկերոջմէն, վառեց ու քանի մը անգամ ուժով քաշելէ ետքը դուրս տուաւ ծուխը, որ Տէրոջը հաճելի ողջակէզի մը մուխին պէս ուղղակի վեր բարձրացաւ:

— Ալխարհքուժս մարդը մի միկրոկոզմա է, սկսաւ ինձէլտուրեանց. նա ձեւացնում է ինքնին մի ամբողջութիւն որ ունի իր սեփական կեանքը եւ պահանջները. նա, համարեա՛, կապուած է իր նմանների հետ մի խիստ ֆիկտիվ կապով: Միկրոկոզմայի համար արտաքին աշխարհը այն նշանակութիւնը ունէ՛ որ ունէ՛...

— Բայց, կ'աղաչեմ, եթէ կարելի է նախ սա փողերուն խնդիրը կարգադրենք, պնդեց Կուլտամեանց, տեսնելով որ ընկերը իմաստասիրական տեսութիւններու մէջ կը մուտրի:

— Աւերը, այդ մասին եմ խօսում, ըսաւ միւսը ժպտելով:

Եւ իրա՛ւ ալ այդպէս էր: Ինձէլտուրեանց առաջ

տարաւ իր վարկածը, եւ ուս եզրակացութեան յանգեցաւ թէ Հայրենասիրութիւն եւ յեղափոխութիւն պէտք չէր որ իր շահերէն զրկէին միկրոկոզման որ իր մէջ կը պարու- նակեր արդէն աւելի ներքին ու աւելի բնական հայրե- նիք մը, կոզմոսը չէր կրնար իտէալական վիճակի մը հասնիլ մինչեւ որ մէն մի միկրոկոզմա չաւնենար իր սեփական բարգաւաճութիւնը: Միկրոկոզման որչափ զօ- րանար, այնչափ իր զօրութեամբն իսկ, առանց որ եւ է աւարուխտական ջանքի, պիտի զօրացնէր կօզմոսը, որ ուրիշ բան չէ, այլ եթէ միկրոկոզմաներու բովանդակու- թիւնը՝ հետեւաբար ժողովուած դրամները պէտք էր բաժ- նել երեք մասի, մին իրեն, միւսը կուլտամեանցի, և միւսը ցածը կեդրոն զրկելու համար,

կուլտամեանց, ինչպէս ըսինք, կուսած էր որ կեդ- րոնէն եկած լիազօրին հետ համաձայնութեան պիտի գար, բայց չէր յուսար որ կնճիոր այսքան դիւրին, մանա- ւանդ այսքան փիլիսոփայական կերպով պիտի լուծուէր: Հիմակ բոլորովին ապահով եւ ուրախ, չքաշուեցաւ ա- զատօրէն խօսելու:

— Ըջմարիտը, պատասխանեց, ես ալ արդէն կեդրոնին դրամ զրկելու դրութեան հակառակ եմ: Չէ՛ մի որ ապա- կեդրոնացումը լուսագոյն է:

Եւ վար չմնալու համար ինձէկտուրեանցէն, ինքն ալ սկսաւ երկար տեսութիւն մը կեդրոնացման եւ ապակեդ- րոնացման մասին, եւ ջանաց այդ կերպով եւս լուծելու հաւաքուած դրամները մէջերնին բաժնելու խնդիրը:

Ինձէկտուրեանց անմտադիր ականջով հետեւեցաւ իր խօսակցին,

— Ախրը, կենտրոնացում, ապակենտրոնացում զը- րանք պարապ բաներ են, ըսաւ արհամարհոտ քմծի- ծաղով մը. խնդիրը, բարեկամ, նկատիր աւելի բարձր, աւելի իդէալական տեսակետից... կոզմոսի եւ միկրոկոզ- մայի տեսակետից:

Երբ երկու «միկրոկոզմա»ները դուրս ելան գարե- ջրատունէն, իրիկուն եղած էր ու արդէն կազերը վառ- ուած:

— Գնանք մի սենեակ գտնել ինձ համար, ըսաւ ինձէկտուրեանց որ կազի լոյսերը տեսնելով յիշեց թէ մոռ- ցած էր իրեն համար սենեակ պատրաստելու:

Սենեակի խնդիրը կարգադրելէ ետքը գացին իրիկ- ուան ճաշն ընել և յետոյ կուլտամեանց՝ առանձին՝ իր տան ճամբան ձեռք առաւ:

Քաշելով հանգերձ, պրոպականդիտը կը մտածէր ցերեկի իմաստասիրական խօսակցութեան վրայ: Միկ- րոկոզմայի տեսակէտը նորանոր հորիզոններ բացած էր իր աչքին առջեւ:

— Շատ աղուոր բացատրեց ինձէկտուրեանց միկրո- կոզմայի և կոզմոսի իրարու հետ ունեցած առնչութիւ- նը, կը խորհէր: Իրացնէ, ինչ կ'ուզեն թող ըսեն, առ կովկասցիները մենէ տարբեր մարդիկ - են. փիլիսոփայա-

կան ըմբռնում մը, հասկացողութիւն մը ունին որ մեր քով կը պակսի. յետոյ, ինչ սկզբունք, ինչ նկարագիր, ինչ կարող, ինչ ստամոքս... Միկրոկոզման զօրացնել, նազած, անկախ, քարգաւաճ վիճակի մը հասցնել, ահա՛ փրկութիւնը, ահա՛ բուն յեղափոխութիւնը:

Յանկարծ նոր լոյս մը ծագեցաւ մտքին մէջ, ցամաք- նաւանդ ինձէկտուրեանցի բառերով «իդէալական բարձր տեսակէտ մը»:

— Եթէ, մտածեց, բաժնեմ իմ քով եղած դրամները անոր ու կեդրոնին հետ, զրկում մը, հարօտահարու- թիւն մը, գողութիւն մը ըրած չեմ ըլլար այն միկրոկոզ- մային զոր ես ինքս կը ներկայացնեմ:

Եւ խեղճ մարդը խղճի խայթ մը զգաց այն անօրէ- նութեան համար զոր պիտի գործէր իրեն դէմ:

Այս խորհրդածութիւններով էր որ տանը դուռը զարկաւ:

Ներս մտնելու միջոցին մէկը թեւէն բռնեց եւ ըսաւ.

— Ո՛ւր ես, ժամերէի վեր քեզի կը սպասեմ: Պատուհաս խմբի պետ Աշոտն էր:

— Ի՞նչ կայ, հարցուց կուլտամեանց իր խօսակցին կերպարանքէն դող ելած:

— Ծանր բաներ, վեր ելլանք ու կը պատմեմ: Երկու յեղափոխականները առանձնացան կուլտա- մեանցի սենեակը:

— Ատոմը բռնուեցաւ, ըսաւ Աշոտ: — Ի՞նչպէս...

Դառատուն նստաւ աթոռի մը վրայ, եւ սկսաւ իր պատմութիւնը:

Հանգանակութեան գործը յաջող կերպով առաջ գա- ցած էր թաղին մէջ, ամէնքը գրեթէ յօժար կամքով կամ առ առաւելն պզտիկ սպառնալիքով մը կատարած էին իրենց հայրենասիրական պարտականութիւն. միայն եր- կու հարսուտ գտնուեր էր որոնք չլին ուզած ցնձալ որ և է կերպով, եւ նոյն իոկ սպառնացեր էին օտտիկանութեան իմաց տալ, եթէ յեղափոխականները պնդէին իրենց պա- հանջման վրայ. Աշոտ խոհեմութիւն համարած էր, գոր- ծը բոլորովին չվտանգելու համար, հրաժարիլ այդ ան- պիտաններու տալիք զրամէն, բայց Ատոմ ինքն իր զլխին գացեր էր այդ հարուստներէն մէկուն տունը և ըկվովէրը ցոյց տալով առնելիքը ուզեր էր:

Հարուստը զէնքին նեղացուցիչ դրացնութենէն աղա- տելու համար Ատոմին ըսած էր.

— Տղաս, կեցիք իրար հասկնանք. խնդրին մէջ սխալ հասկացողութիւն կայ... ես չըօի որ դրամ չեմ իտար, ալ ըսի որ...

Եւ աղաչեր էր Ատոմին որ հետեւեալ առտու, ժամը իննին կրկին իր տունը գայ դրամները առնելու. երբ պա- տանին ներկայացած էր որոշեալ ժամուն, տանը մէջ

պահուրտած երեք ոտիկան վրան յարձակեր ու ձերբա-
կալեր էին զինքը:

—Յրբ եղաւ ձերբակալութիւնը:

—Այս ատուս:

—Է՛, միւս հաւաքուած զրաճեերը...

—Քովս են, բերի որ քեզի յանձնեմ:

Ու Աշոտ համրեց 420 տակիր:

(Շարունակելի)

ՃԱՄԱՆՑ

ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

Թայմզին քաղելով Նոր Կեանքի մարտ 15ի թիւին
մէջ հաղորդեցինք Մակեդոնական, և անոր հետ առըն-
չութիւն ունեցող հայկական՝ խնդիրներու կարգադրու-
թեանը համար Ասգլիոյ եւ Ռուսիոյ դեպպաններուն զե-
մուծները սուլթանին: Բանակցութեանց մանրամասնու-
թիւնները, յստակաբար յաղբիւրներէ հոսած, կը փու-
թանք մեր ընթերցողներուն ըմբռնել, իյազուրդ իրենց
դիւանատոշոր ծարաւին:

* *

Մեծ Պետութեանց դեպպանները ուրբաթ օրուան
սէկւալըքին ներկայ գտնուելէ յետոյ երբ մեկնելու կը
պատրաստուէին, Ռուսիոյ ներկայացուցիչը կը զիտէ որ
իր անզիւացի պաշտօնակիցը կը տնտնայ: Զուր տեղը
չէ որ «նենգամիտ (կլպիոն)» ըսած են: Պ. Զինովիեվի
ուղղամիտ մտքին մէջ ալ կասկած մը կը սպրդի. եւ,
խոհեմ դիւանագէտ, օգտակար կը համարի կառքը կա-
մաց կամաց քալեցնել. եւ օակայն Սըր Նիքօլա Օ'Քօնր
կը յամէ: Ռուս դեպպանը խնամակալ հոգածութեամբ
հարկ կը տնոնէ իր առաջին թարգմանը Երլտզ ճեպըն-
թացել, կորուսեալին ի խոյզ եւ ի խնդիր: Պ. Մաքսիմօֆ
որուն աչքերուն առջեւ յար եւ հանապազհոյանիկը պար-
զուին Երլտզի էն ծածկախորշ թաքստոցները պահուրտած
զազտնիքներն իսկ, — թեթևալաց բուպլիներու վրայ ամ-
բարձիկ —, առանց զժուարութեան կ'իմանայ Սըր Նի-
քօլա Օ'Քօնրի մոլորումը մինչեւ սուլթանին օսենակը
տանող նրբաքններուն մէջ: Հեւի հեւ ետ կը դառնայ, և
վտանգը իմաց կուտայ իր սեծաւորին: Մենք երկու մտա-
տանջ դիւանագէտները զլուս վլուս մինակ կը թողունք
խորհրդակցութեան համար, ու կը վազենք Երլտզ:

* *

Սուլթան Համիտ զերթ անմեղունակ գտնուել «որ
ի սպանդ վարի», նայմածքը հեզուկ նագուկ, զլուխը
վարահակ, խոնարհաբար կ'ընդառաջէ Անգլիոյ դեպպա-
նին: Սըր Նիքօլա Օ'Քօնրը բարձրայօնակ ներս կը մտնէ,
բրիտանտկան հպարտութեամբ լի թաթաւուչ իրննով:
Յետ սովորական բարենեբու փոխանակութեանց, խօսակ-
ցութիւնը կը սկսի:

Գեպպանը. (խորիտաձայն). Նորին վեհափառութեան
կառավարութիւնը վանի, Պիթլիսի, Էրզրումի հիւպատոս
սարաններէն ստացած տեղեկութեանցը համեմատ, այդ
նահանգներուն հայ ժողովրդին կացութիւնը գտնադէտ
կը համարի: Որոշ հրահանգներ ստացած եւ պահանջել
Չերդ վեհափառութեանէն, ՅԱրդ. յօղուածին անմիջական
գործադրութիւնը:

Սոչրաւը. (նուաղուն ձայնով). Այդ նահանգներուն
մէջ պատահած դէպքերը շատոնց է որ ուշադրութիւն
կը զրուեն: Շատ ուրախ եմ որ Նորին վեհափառութեան
կառավարութիւնը այս անգամ ինքնայօժար պիտի ա-
ջակցի իմ հպատակասէր փափաքներուս իրօականացմա-
նը: Չերդ վեհափառութիւնը քաջ զիտէ թէ իմ քրիստոնեայ
հպատակներուս բարութեանը համար յղացած խորհուրդ-
ներս երբեք չեն գործադրուիր, Պետութեանց կողմէն
յարուցուած արգելքներուն պատճառաւ: (Սոչրաւիկն աչ-
քերը կը լեցուի. դեպպանն ալ կը յռչուի:) Այ՛, որո-
շած եմ այդ նահանգներուս ինքնավարութիւն շնորհել:
Ծրարկը արդէն նախարարներուս խորհրդին յղած եմ:
Հրաման պիտի տամ Մազպարան անմիջապէս պատրաս-
տել: Իսկ առ այժմ, մինչև ինքնավարութեան վերջնական
կազմակերպութիւնը, որ ժամանակի կարօտ է, կուզեմ որ
ժողովուրդը հանգիստ ապրի, առանց թեթև նեղութիւն
մը կրելու: Այս բուպէիս իսկ վալիներուն պիտի հեռագրեմ
որ մինչև ինքնավարութեան ծրագրին վերջնական պատ-
րաստութիւնը, առ այժմ մասնաւոր հոգածութեամբ խը-
նամեն, Սելանիկի, Մանասթը. ի, Իսկիւպի քրիստոնեայ
Պուլկարները:

(Մինչ այս վերջին խօսքերը կը թարգմանուին, սուլ-
թանը զլուխը քշիկ մը վեր կը վերցնէ եւ զաղտագողի
ակնարկներ կուտայ Անգլիոյ դեպպանին: Սըր Նիքօլա
Օ'Քօնրը քիթը բերանը կը թթուեցնէ Մակեդոնիոյ քա-
ղաքներուն անունները լսելով, ու զլուխը քշիկ մը կը
խոնարհեցնէ):

Գեպպանը (նուազ խորիտաձայն). Կարծեմ թէ սխալ
հասկցողութիւն մը տեղի ունի: Նորին վեհափառու-
թեան կառավարութիւնը Չերդ վեհափառութեան Ասիա-
կան եւ ոչ թէ Եւրոպական նահանգներուն քրիստոնէից
վիճակն է որ հոգածութեանը առարկայ կ'ընէ:

Սոչրաւը (նուազ նուաղուն ձայնով). Ապահով եմ որ

Չերդ Վսեմութեան զարնուած հեռագիրը անշուշտ անուններու շփոթութիւն ըրած է, ուստի սխալը ինքնաբերաբար ուղղեցի։ Նորին Վեհափառութեան կառավարութիւնը իր աչքերէն շատ հեռու պէտք է գտնէ իմ սփական նահանգներու։ Իր հոգածութիւնը անշուշտ իմ երոպական նահանգներու ըրիտօննէից համար է։ Մեծ Պետութեանց սահմանակեց, եւ կրօնական միենոյն դաւանանքին պատկանող Պալքանեան պզտիկ պետութիւններէն շրջապատուած, այդ նահանգներս կրնան դժբաղդ զէպքերու պատրուակ հայթայթել։ Ուստի հաստատապէս օրոշած եմ ինքնավարութիւն շնորհել այդ նահանգներուն օրպէս զի Եւրոպայի խաղաղութիւնը չվտանգի։

Դեսպանը (զրեթէ նուազուն ձայնով)։ Նորին Վեհափառութեան կառավարութիւնը Չերդ Վեհափառութեան Եւրոպական նահանգներուն ըրիտօննէից վիճակը բարեբաօտիկ կը համարի։ Համոզուած է թէ Մակեդոնիայ արդի երջանիկ կացութեան մէջ ու եւ է փոփոխութիւն ըրիտօնեայ Պուլկարներուն դժբաղդութեանը պատճառ պիտի ըլլայ, ուստի եւ պիտի վտանգէ Եւրոպայի խաղաղութիւնը։ Նորին Վեհափառութեան կառավարութիւնը կը խնդրէ Չերդ վեհափառութենէն արտասովոր խստութեամբ պատուհասել այն բոլոր ստահակ պուլկարները որոնք իրենց կրօնակիցներուն երջանկութիւնը կուզեն խանցարել, իրենց անխոտովանելի շահերուն ապահովութեանը համար։

Սուրբանը (խորխտաձայն) Նորին Վեհափառութեան կառավարութեան համար իմ բարեացակամ տրամադրութիւններու իբր հաւաստիք, պիտի պարտաւորուիմ, հակառակ իմ փափաքիս, աւելի երջանիկ չրնել եւրոպական նահանգներու իմ ամենսիրելի ըրիտօնեայ պուլկար հրպատակներու։ Եւ յատկապէս Չերդ Վսեմութեան իբր հաճոյակատարութիւն, պիտի հարկադրուիմ գործնականապէս խրատել իմ այն ըրիտօնեայ պուլկար հպատակներս որոնք իրենց կրօնակիցներուն աւելի շատ երջանկութիւն կը փափաքին։ Տարակոյտ չունիմ նաև որ Նորին Վեհափառութեան կառավարութիւնը շատ զոհ պիտի մնայ Վանի, Պիթլիտի, Էրզրումի հիւպատոսարաններէն տեղեկանալով որ Ասիական գաւառներու իմ սիրելի հայ հպատակներս այնքան երջանիկ են որքան եւրոպական նահանգներու պուլկար ըրիտօնեաները։ Եւ յատկապէս Չերդ Վսեմութեան իբր հաճոյակատարութիւն, պիտի հարկադրուիմ գործնականապէս խրատել իմ այն հայ հպատակներս ալ որոնք իրենց կրօնակիցներուն աւելի երջանկութիւն կը փափաքին։

Դեսպանը (նուազուն ձայնով)։ Նորին Վեհափառութեան կառավարութիւնը երախտապարտ է Չերդ Վեհափառութեան օր թէ՛ եւրոպական և թէ՛ ասիական նահանգներու ըրիտօնեաները այսպէս երջանիկ պահելով, խաղաղութեան սպանացող " եւ է վտանգ կը հեռացնէ։

Ունկնդրութիւնը վերջանալով, սուլթանը, զուլիսը

բարձր, և իսլամական հպարտութեամբ լեցուած, քանի մը քայլ կ'ընկերանայ դեպքանին, որ զուլիսը վայրահակ, խոնարհաբար գուրօ կ'ըլլէ։

Սըր Նիքուա Օ'Քօնրրի մեկնելէն անմիջապէս յետոյ Պ. Չինովիէվ ունկնդրութիւն կը պահանջէ, եւ կը ներկայանայ։

Սուլթանը իր խոնարհ, անմեղունակ զիրքը կը վերստանձնէ, եւ վայրահակ զլիսով կ'ընդունի Չարին ներկայացուցիչը, որ կոկոզավիզ հպարտութեամբ ներս կը մտնէ։ Սովորական բարեաներու փոխանակութենէ յետոյ խօսակցութիւնը կ'սկսի

Դեսպանը (խորխտաձայն) իմ Օգոստոսիտ տէրօ, Սելանիկի, Մանասթրի, Իսկիւպի հիւպատոսարաններէն ստացած տեղեկութեանցը համեմատ, այդ նահանգներուն ըրիտօնեայ պուլկար ժողովրդին կացութիւնը զանոսդէտ կը համարի։ Որոշ հրահանգներ ստացած եմ պահանջել Չերդ Վեհափառութենէն ՉՅրդ յօղուածին անմիջական գործադրութիւնը։

Սուրբանը (նուազուն ձայնով) Այդ նահանգներուն մէջ պատահած զէպքերը շատոնց է որ ուշադրութիւնս կը զրաւեն։ Շատ ուրախ եմ որ Նորին Վեհափառութիւնը այս անգամ ինքնայօժար պիտի աջակցի իմ հպատակաւոր փափաքներու իրականացմանը։ Չերդ Վսեմութիւնը քաջ գիտէ թէ իմ ըրիտօնեայ հպատակներու բարութեանը համար յղացած խորհուրդներս երբեք չեն գործադրուիր, Պետութեանց կողմէ յարուցուած արգելքներուն պատճառաւ։ (Սուրբանիւն աչքերը կը շեշտէ)։ Դեսպանն ալ կը յռչոզի։ Այո՛, որոշած եմ այդ նահանգներու ինքնավարութիւն շնորհել։ Երազիրը արդէն նախարարներու խորհրդին յղած եմ. հրաման պիտի տամ մազպարան անմիջապէս պատրաստել։ Իսկ առ այժմ, մինչեւ ինքնավարութեան վերջնական կազմակերպութիւնը որ ժամանակի կարօտ է, կուզեմ որ ժողովուրդը հանգիստ ապրի, առանց թեթեւեղութիւն մը կրելու։ Այս րոպէիս իսկ վալիներուն պիտի հեռագրեմ որ մինչեւ ինքնավարութեան ծրագրին վերջնական պատրաստութիւնը, նա այժմ մտնաւոր հոգածութեամբ խնամեն Վանի, Պիթլիտի, Էրզրումի հայերը։

(Մինչ այս վերջին խօսքերը կը թարգմանուին, սուլթանը զուլիսը քշիկ մը վեր կը վերցնէ եւ գաղտագողի ակնարկներ կուտայ Ռուսիոյ դեսպանին։ Պ. Չինովիէվ թիթը բերանը կը թթուեցնէ Հայաստանի քաղաքներուն անունները լսելով, ու զուլիսը քշիկ մը կը խոնարհեցնէ)։

Դեսպանը (նուազ խորխտաձայն). կարծեմ թէ սըխալ հասկացողութիւն մը տեղի ունի իմ Օգոստոսիտ

Տէրօ Զերդ Վեհափառութեան երօպական եւ ոչ թէ ասիական նահանգներուն քրիստոնէից վիճակն է որ իր հոգածութեանը առարկայ կ'ընէ:

Սոսրասը (նուազ նուազուն ձայնով). Ապահով եմ որ Զերդ Վեհափառութեան զարնուած հեռադիրը անուններու շփոթութիւն ըրած է, ուստի սխալը ինքնաբերաբար ուղղցցի: Նորին Վեհափառութիւնը իր աչքերէն շատ հեռու պէտք է գտնէ իմ երօպական նահանգներու իր հոգածութիւնը անշուշտ իմ ասիական նահանգներու քրիստոնէից համար է: Սահմանափակ Վեհափառութիւն, որ Նորին Վեհափառութեան հպատակ բազմաթիւ հայեր կը գտնուին, այդ նահանգներու կրնան գծադրող ղեկներու թատերավայր ըլլալ: Ուստի հաստատապէս որոշած եմ ինքնավարութիւն շնորհել այդ նահանգներուն, որպէս զի Նորին Վեհափառութիւնը " եւ է ձանձրոյթ չի զգայ իր հայ հպատակներէն:

Դեպքանը (գրեթէ նուազուն ձայնով). Իմ Օգոստոսփառ Տէրօ Զերդ Վեհափառութեան ասիական նահանգներուն Հայոց վիճակը բարեբաօտիկ կը համարի: Համոզուած է թէ Հայաստան նահանգներու երջանիկ կացութեան մէջ " եւ է փոփոխութիւն Հայոց դժբաղդութեանը պատճառ պիտի ըլլայ, ուստի եւ պիտի տօգուհացնէ իմ Վեհափառ Տէրօ: Իմ Օգոստոսփառ Տէրօ կը փափաքի որ Զերդ Վեհափառութիւնը արտասովոր խրատութեամբ պատուհառէ այն բոլոր ստահակ Հայերը որոնք իրենց կրօնակիցներուն երջանկութիւնը կուզեն խանդարել, իրենց անխոտովանելի շահերուն ապահովութեանը համար:

Սոսրասը (խորխտաձայն). Նորին Վեհափառութեան համար իմ խորին յարգանքներու իբր հաւատարմ, պիտի պարտաւորուիմ հակառակ իմ փափաքող աւելի երջանիկ չընել իմ ասիական նահանգներու ամենաօրելի հայ հպատակներու: Ինչ յատկապէս Զերդ Վեհափառութեան իբր հաճոյակատարութիւն, պիտի հարկադրուիմ գործնականապէս խրատել իմ այն հպատակ Հայերս որոնք իրենց կրօնակիցներուն աւելի շատ երջանկութիւն կը փափաքին: Տարակոյտ չունիմ նաև որ Նորին Վեհափառութիւնը շատ զոհ պիտի մնայ Սելանիկի, Մանասթըրի, Իուկիպի հիւպատոտարաններէն տեղեկանալով որ եւրօպական գաւառներու իմ օրելի քրիստոնէայ պուկար հպատակներս այնքան երջանիկ են, որքան ասիական նահանգներու հայ հպատակներս: Ինչ յատկապէս Զերդ Վեհափառութեան իբր հաճոյակատարութիւն, պիտի հարկադրուիմ գործնականապէս խրատել իմ այն քրիստոնէայ պուկար հպատակներս որոնք իրենց կրօնակիցներուն աւելի շատ երջանկութիւն կը փափաքին:

Դեպքանը (նուազուն ձայնով). Իմ Օգոստոսփառ Տէրօ շատ զոհ պիտի մնայ որ Զերդ Վեհափառութիւնը իր թէ ասիական և թէ երօպական նահանգներու քրիստոնէաները այսպէս երջանիկ պահելով, " եւ է տօգուհութեան առիթ պիտի չհայթայթէ:

Ունկնդրութիւնը վերջանալով սուլթանը զուլը բարձր, մինչեւ սենեակին գուռը կ'ընկերանայ գեօպանին որ նուազ սիգաբար դուրս կ'ելլէ:

Պ. Զինովիւզի մեկնելէն յետոյ սուլթանը սկսաւ քահ խնդալ. եւ պաշ քեթիպ թահսին պէլին հրամայեց հեռեւեալ հեռագիրը զարնել Սելանիկի, Վանի, Պիթլիօի Էրզրումի վալիներուն:

« Ասայիշը ումուսիւնին էտեր ճիհէթ մուհաֆֆազասընա կայրէթ օլունմասը իրատէի սէնիէի հազրէթի փատիշահի իգթիգասընտան տըր: »

(Ընդհանուր անգորութեան պահպանման հոգատանելիք բարձր հրամանն է Նորին կայսերական Վեհափառութեան):

Սովորական պատճէնն է որով կուտակալները հրաման կը ստանան ամենախիտ միջոցներ ձեռք առնել քրիստոնէից դէմ:

ՍԿԵՊՏԻԿ

ՓՈԹՈՐԿԵԱԼ ՆԱԻԸ

Փահիրէ 1899 մայիս 1ին հիմնուեցաւ Որբասիրաց Ընկերութիւն մը, որուն կանոնագիրը Եգիպտոսի Ազգային Իշխանութիւնը այս տարի յունուար 1ին վաւերացուց:

Այդ Ընկերութեան նպատակն է՝ Արաբկիրէն ու շրջականերէն մանչ եւ աղջիկ որբեր խնամել, առանց դաւանանքի խտրութեան: Որբերը հինգ տարի Արաբկիրի կամ յարմարագոյն ուրիշ վայրի մը Որբանոցին մէջ պիտի կրթուին: Հնգամեայ առաջին շրջանի մը բոլորումէն յետոյ, «Կեդրոնական Արամեան Որբանոց» մը պիտի հաստատուի Փահիրէ, եթէ տաս օտանի տարեկան ծախսերը հոգալու բաւականաչափ հասոյթ բերող պահեստի գումար մը արդէն հայթայթուած է: Հակառակ պարագային, երկրորդ շրջան մը պիտի սկսի նախորդին համանման գործունէութեամբ:

Տպագրեալ կանոնագիրը իր ճակատը կը կրէ, իբր նշանաբան, պատկեր մը պէկոճեալ ծովին որուն վրայ հայ որբուկներով լեցուն փոթորկեալ նաւակ մը, ընկղմելու վրայ: ու վտանգեալները կ'աղաղակեն.

Կեանքերնիս՝ ծով ալեկոճ,
Ու որտեղնիս՝ խորունկ խոց,
Մենք, հայ որբեր անպաշտպան,
Կարօտ ենք ձեր օգնութեան,
Հայեր տարաբնակ,
Յիշեցէ՛ք մեզ, մի՛ մոռնաք:

Այդ պատկերը ամբողջ Հայութեան կեանքն է. դարերէ ի վեր մեր ապրած կեանքը. ու զեռ անդունդը չենք խորասուզուած, ու պիտի շխորասուզուինք ալ: Ազգային նաւերնիս ովկիանոսին վրայ վարել սորված ենք: Գրեթէ միշտ փոթորիկի կը բռնուինք, տագաւտ մը կը պատրի՛ բայց կարկտանը պատրաստ է, փախա մը կը կոտրի՛ տեղը շուտով կը դնենք, կոհակները ղեկը կը տանին՝ երկրորդ մը ձեռքերնու տակն է. կը ծովենք ու կը ծովենք, մինչեւ փրկութեան նաւահանգիստը ժամանուին:

Առագաստամաւ մը շիփ շիտակ գծուած սկիզբ մը չէ որ կ'ընթանայ, նման շոգեկառքին: Նուապետ, նաւազ, ղեկավար ամէնքն ալ պետք է շուրերը ձանչնան, թշնամի հողմերուն դէմ առագաստանաւերը գործածելու արհեստին քաջատեղեակ ըլլան, և հոգեկան զօրութեամբ արիացեալ մարմնով պէտք է գիշեր ցորեկ հնարիմաց մըտքով արթուն հսկեն, և անխոնջ աշխատութեամբ տըքնին որպէս զի նաւը հողմակոծ կոհակներէն ճողոպրուած շարունակէ յառաջանալ:

Այսօրեղած է Հայութեան կեանքը, ու այս է զեռ: Կը շարունակենք նաւել վաւանգաւոր ծովուն վրայ, ամէնքս ալ նաւին փրկութեանը աշխատելով:

Իր լուսնանը մէջ կը թողունք անդին մեր աշխարհը, ուր սակայն կեանքը սրտերու եւ մտքերու մէջ կը պահպանուի, աստի՛ն օտար երկիրներ օրէ օր աւելի ետան. գազին, աւելի յարածան գործունէութիւն մը կ'ամրացունեն: Եւ Հայրենիքն է որ իբր կեցրոնսաձիգ զօրութիւն իրեն կը քաշէ տարագիր գաւակներուն մտածութիւնը քիչ հոգածութիւնը:

Գահիրէի Որբասիրաց Ընկերութիւնը որ յանձնաքրարելի վարիչներով կը ներկայանայ Հայ ժողովրդին առջեւ, ինքն ալ մեր լաւատեսութիւնը զօրացնող նոր վրկայութիւն մը կը բերէ: Ահա մարմին մըն ալ որուն առաջագրած նպատակը աշակցութիւն մըն է Հայ ժողովրդին պահպանմանը սատարող ուժերուն, ու պէտք չենք տեսներ շատ ծանրանալ անոր բարերար ազդեցութեանը վրայ: Բայց ուրիշ դիտողութիւն մը կը ներկայացնենք: Կանոնադրին 5րդ. յօդուածը կ'ըսէ.

« Ընկերութեանն Կեցրոնն է Գահիրէ, որուն կը պատկանին նոյն նպատակաւ քաղաքիս շրջակայքը կազմուած ու կազմուելիք բոլոր մասնաճիւղերը: »

Այդ կազմակերպութիւնը ինքնին ծառայութիւն մըն է ազգային զգացման պահպանումին, ազգային գաղափարին հզօրացման այն Հայոց մէջ զոր բաղդը ցիրուցան տարածած է Ափրիկէ. Եռանդագին բոլորուելով գաղափարի մը շուրջը, ու անոր իրականացմանը աշխատելով ամէն օր սրտերնին պահ մը դէպի բացակայ Հայրենիքը թաշելու կը դրդի: Օտարութեան մէջ անմեա պահենք Հայ ոգին, մինչեւ Օրը Հասնի: Որբասիրաց Ընկերութիւնը եթէ ուղղակի Հայաստանի ապագայ սերունդը կը պատրաստէ, անուղղակի՛ պատրաստ կը պահէ արդի սերունդը Եգիպտոսի մէջ:

Եռանդոտ, խանդավառ երիտասարդութիւն մը՝ այդ ընկերութիւնը կը վարէ, ուստի յուսալիք ենք որ իր առաջագրած նպատակին պիտի հասնի:

ԼՈՒՐԵՐ

ՅՐԱՆՍԱԿԱՆ երեք մարտանասի Սուրիոյ ջոշերը այցելութեան շարժառիթը Բարիզի քերթերէն վերջապէս աւելի որոշ կերպով կը տեղեկացուի: Կա Պոլսոյ դեսպան Պ. Բոնսրանի հազորք միջամտութեամբն է որ Բարիզի նահիշք այդ կայսերական ստիպողարար առաջումը որոշած է, ի պաշտպանութեան կարոյիկ կրօնատրական միարանտրեանց շահերուն:

ԱՆԻՇԻՍԱՆՊԿԱՆՆԵՐԸ. Երէ ստոյգ եւ կ. Պոլսէն Բարիզ հասնա՞լ լուրերը, Անիշիսանախաները Պանջ Օրջմանիկ Ղալարիոյ ճիստատարիւնը օդը հանելու կը պատրաստուին եղեր: Այդ շինքին ետեւը գտնուող տան մը մէջ կ'ստորագրած խաղաղութեան կնիքէն յայտնուած է քիզեւելիկ երթելու ձամբաներ քացուած են, պայքացիկներն զետեղման համար: Պետք է յիշել քի քանի մը շաքար տասը Ղալարիա՞ Երիտասարդ Թիւրքերն առաջնորդն զբաւուման լուրերը տարածուեցան: Չենք գիտիր քի ռատիկանտրեան մէկ նոր հեւարքն է քի Երիտասարդ Թիւրքերն յիմարական ձեռնարկը: Ամէն պարագայի մէջ գոհ ըլլանք որ գոնէ հայ անուանը չի շուշիր այս տխուր շուրթերուն մէջ:

ԵՐԿՐԱՇՈՐԺԸ. Մարտ 31ին կ. Պոլսիս գատուն կանոնախ երկրաշարժի սաստիկ ցնցումներ տեղի ունեցած են: Եռան պահուն սուրբանը Տոլմա Պահչի պաշտոնը կը գտնուէր, Լուրպան պայքամիտ աօրիս: Այն ինչ պարտք սարժիլ սկսեր է, նուազածուները լեղապատաս ձգեր փախեր են. նաև մեծ շիրտարիս տիրած է բոլոր հանդիսականներուն մէջ: Սուրբանը գահէն իջնելով քանի մը քայլ շատաջացեր է, դոռս ելլելու դիտու մով, քայց անմիջապէս ինքզինքն ամփոփելով, վերադարձեր է իր տեղը, եւ պաղարիս անտարբերութեամբ հրամայեր է հանդեսին անընդհատ շարունակութիւնը:

ՀԱՍՏԵՆ ԵՒ ԲԱՍՆԵԳԻՆ

ԼՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1ին կ. 15ին: Բաժնեգինն է Երրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 Ֆրանք: Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 ամլար:

ԼՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել ա՛

FRANK,
27, CHESTERTON ROAD,
ENGLAND LONDON, W